

ԷՆԲՅՐ ԻՎՈՅ
ՍԷՐԸ ՎԱԽՏԱՆ ՉՈՒՆԻ



Թարգմանեց՝
ՍԱՇՏՈՅ ՎԱԿԷ ԴԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Սիրելի Ընթերցող,

*օգտագործելով Հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախա-
ձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր
կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրու-
թիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու
առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց
Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:*

*Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս
ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս
համացանցային հասցէն.*

gradaran@mashtoz.org

*Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանա-
ցանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւն-
ների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:*

*Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն
խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացան-
ցային վերոնշեալ հասցէն:*

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Մաշտոց Վահէ Ղազարեան

ՄԵՐԸ ՎԱԿՏԱՆ ԶՈՒՆԻ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Մինչեւ 1952 թուականը, այս նամակը, որ սովորաբար յայտնի էր *De gradibus caritatis* (Սիրոյ աստիճանների մասին) անուամբ, մի հնագոյն աւանդութեան համաձայն՝ մշտապէս վերագրուել է Սէն Վիկտոր վանքի մեծաւոր Ռիքքարդոյին, որպէս վերջինիս նամակներից մէկը, ուղղուած Սէվէրինոսին:

Այս վերագրմանը հետեւել էր նաեւ Դիւմէժը, երբ 1952 թուականին ձեռնարկել էր *De gradibus caritatis* եւ *De IV gradibus violentae caritatis* (Բուռն սիրոյ չորս աստիճանների մասին) նամակների հրատարակմանը, որոնք միասին աւանդաբար վերագրուում էին Ռիքքարդոյին: Առաւել ուշադիր քննութիւնից յետոյ, սակայն, Ֆրանսացի բանասէրը հանգել էր այն եզրակացութեանը, որ այլեւս անհնարին էր Ռիքքարդոյին համարել այս նամակի հեղինակը, մեկնելով արտաքին ու ներքին քննադատութեան զանազան պատճառներից: Ամենայն հաւանականութեամբ, սխալ վերագրումը Սէն Վիկտոր վանքի գրադարանավար Քլոդ դը Գրանդիւլինն է (1514թ.), որին հետեւելով՝ Մերլինը, երբ 1518 թուականին հրատարակում էր Ռիքքարդոյի գործերը, առաջին անգամ լինելով՝ այդ գործերին կցեց նաեւ այս նամակը:

Այստեղ սահմանափակուում ենք միայն մի քանի եզրակացութիւններ ներկայացնելով, մի կողմ թողնելով բանասիրական ու քննադատական մանրամասնութիւնները:

Ինչ վերաբերում է թուագրմանը, այս նամակը, քանի որ պարունակում է հինգ մէջբերումներ Սբ. Բեռնարդոսի *De consideratione* աշխատութիւնից, որը գրեթէ միաձայն թուագրուում է 1152 թուականին, պէտք է որ համարուի այդ թուականից յետոյ շարադրուած, բայց ոչ աւելի ուշ՝ քան 13րդ դարի կէսը, որովհետեւ այդ ժամանակաշրջանին են պատկանում ամենահին ձեռագրերը: Ոճը, աստուածաշնչեան ու բեռնարդեան մէջբերումները, ինչպէս նաեւ քննարկուած նիւթն ու խնդիրները յուշում են 12րդ դարը: Ինչ վերաբերում է վերագրմանը, ամենահաւանականը "Փ" ընտանիքի ձեռագրերից երեքի առաջարկածն է, որոնք հաստատուն ու համաձայն են ե՛ւ հեղինակի ե՛ւ հասցէատէրի հարցում: Բայց թէ ովքեր են եղբայր Իվոն (*frater Ivo*), որ մատնանշուած է որպէս հեղինակ, եւ Սէվէրինոսը, որ մատնանշուած է որպէս հասցէատէր, այս հարցում անհնարին է հասնել վստահ եզրակացութիւնների: Որքան որ թւում է, խօսքը չի վերաբերում ո՛չ Իվոյ Շարթրացուն, ո՛չ Սէն Վիկտոր վանքի Իվոյին, ո՛չ Սէն Դէնիս վանքի վանահայր Իվոյ Երկրորդին, ո՛չ էլ Իվոյ Վարդոնացուն: Այս նամակի հեղինակ Իվոյի մասին գիտենք միայն այն, որ սովոր էր իւրացնել Սբ. Բեռնարդոսի գրութիւնները եւ ազատօրէն գործածել դրանք իր գրութիւններում: Սէվէրինոսը նոյնպէս մեզ անյայտ մի փոխմեծաւոր է, հոգեւոր կեանքում բաւական յառաջադիմած, որ ուսմունքային բացատրութիւններ է խնդրում Իվոյից:

Նամակի գլխաւոր նիւթը սէրն է եւ «սէր» բառը ներկայ է էջերից իւրաքանչիւրում: Սէրը անյաղթահարելի ուժ է (գլուխ Ա.). ոչինչ եւ ոչ ոք չի կարող դիմադրել նրան, եւ ո՛չ իսկ Աստուած, որը սիրուց յաղթուած՝ խաչ բարձրացաւ մեր համար: Սէրը անյազ է (գլուխ Բ.). Աստուծոյ քաղցրութիւնը հասցնում է յափշտակութեան, այս վաղանցուկ վիճակին, որին հետեւում է վերստին բաժանումը եւ սիրոյ անխուսափելի հառաչանքը, որն անհամբեր փափաքի ձանձրոյթն է: Այս փափաքն անյազ է, որովհետեւ որպէս առարկայ ունի Աստուծուն, որն անսահման է. Նրա սէրն, իրօք, լիացնում է առանց երբեւէ յազեցնելու: Սէրն անդադար տեսնում է Նրան՝ ում սիրում է (գլուխ Գ.). Աստուծոյ սէրը նախորդում է մեր սիրոյն եւ ինչպէս նպաստաւոր՝ այնպէս էլ աննպաստ իրավիճակներում

մեզ մղում է սիրելու: Սէրն արժէքաւորում է ամէն ինչ, եւ միակ բանն է՝ որ Աստուած պահանջում է մեզնից: Հոգին երկու աչք ունի. բանականութիւնը եւ սէրը: Երկուսն էլ կարեւոր են, բայց սէրը թափանցում է մինչեւ ուր բանականութիւնը մթազնում է, խոցում է Աստուծոյ սիրտը, հասնում է Նրան տեսնելուն, թէեւ ո՛չ Նրա էութեան մէջ: Սէրը միաւորող ուժ է (գլուխ Դ). միաբանում է մարդն ինքն իր հետ, մարդիկ միմեանց միջեւ, մարդն Աստուծոյ հետ: Այս միութեան բնօրինակը Ամենասուրբ Երրորդութիւնն է:

Վճարիր սիրոյ հարկը եւ կ'իմանաս, որ գոհացրել ես Տիրոջը (§ 21):

Մեծապէս առատ են աստուածաշնչեան մէջբերումները, որոնց շարքում առաջնային տեղն են զբաւում Պօղոս Առաքեալի նամակները, յատկապէս սիրոյ նշանաւոր օրհներգը: Սաղմոսները, որոնց հետ Իվոն յատուկ մտերմութիւն ունի որպէս վանական, մատակարարում են նրան այն հոգեւոր բառապաշարը, որով կարողանում է արտայայտել Աստուծոյ հետ միութեան փափաքը, հոգու ուրախութիւնը Աստուծոյ ներկայութեան պահերին եւ միեւնոյն հոգու ողբը, երբ Աստուած բացակայ է: Աստուծոյ սիրոյ մասին խօսելիս, մէջբերումները կատարում են Յովհաննէս Առաքեալի գրութիւններից: Եւ վերջում, չէր կարող բացակայել Աստուծոյ ու մարդու միջեւ միասնիկ սէրն արտայայտող պատկերների միջնադարեան մեծագոյն շտեմարանը. Երգ Երգոցը: Եկեղեցու Հայրապետների շարքում, որոնցից Իվոն մէջբերումներ է կատարում այս նամակում, յիշատակելի են Սբ. Բեռնարդոսն ու Սբ. Օգոստինոսը:

Իվոն շատ լաւ է ճանաչում եւ արտասովոր արդիւնաւէտութեամբ խտացնում է միասնիկ նիւթերի ու պատկերների ցանկը. սիրահարուելը, նշանադրութիւնը, յափշտակութեան պատճառ հանդիսացող քաղցրութիւնը եւ վերստին բաժանման վիշտը, սիրոյ վէրքը, յափշտակութեան ընթացքում արբեցումը, եւ մինչեւ իսկ այնպիսի զօրեղ արտայայտութիւններ՝ ինչպիսին է հոգու աստուածացումը: Հրաշալի ուժգնութեան է հասնում սրտի հեղուկացման, հալուելու, հալումաչ լինելու աստուածաշնչեան պատկերը: Ուրիշ պատկերներ եւս արժանի էին մէկ առ մէկ յիշատակուելու եւ նրանցից իւրաքանչիւրի մասին կ'արժէր գէթ մակերեսային տեղեկութիւններ ներկայացնել, բայց միայն մի պահ կանգ առնենք քննելու կենտրոնական եւ նամակի գագաթնակէտը հանդիսացող նիւթը. յափշտակութիւնը: Պօղոս Առաքեալը, մինչեւ երրորդ երկինք յափշտակուած, յափշտակութեան բնօրինակն է միջնադարեան եւ արդի լատին Արեւմուտքի համար: Վիճաբանութիւնների առարկան է այն՝ ինչ պատահել է Պօղոս Առաքեալին այդ յափշտակութեան ընթացքում, հասկանալու համար՝ թէ ընդհանրապէս ինչ է յափշտակութիւնը, եւ ամէն անգամ՝ որ միջնադարեան միասնիկ իմաստով գործածուում է *rapius* բայը, բոլորը գիտակից են՝ որ ակնարկում է Պօղոս Առաքեալի դէպքին: Իվոն նոյնպէս, երբ Զրդ հատուածում կամենում է անյապաղ գծագրել Աստուծոյ հետ ամենասերտ միութեան պահը, գործածում է *raptus* եզրը եւ յիշեցնում է Պօղոս Առաքեալի դէպքը: Բայց սա կատարում է՝ նախապէս ներկայացնելով հոգու ինքն իր մէջ ամփոփուելու պատկերը, որն ամբողջովին հակառակ է միջնադարեան լատին միասնիկ գրականութեան կողմից գործածուած ընդարձակման, ինքն իրենից դուրս գալու, ելքի պատկերին: Եկեղեցու մեծագոյն Հայրապետներից Սբ. Օգոստինոսին հետեւելով, Իվոն ճշտում է, որ միասնիկ իրադարձութիւնների ընթացքում (որոնց մէջ է նաեւ Պօղոս Առաքեալին պատահած յափշտակութիւնը) մարդկային հոգին չի մղում դէպի դուրս, այլ դէպի ներս, դէպի իր ամենախոր ներաշխարհը, այնպիսի սաստիկ խտացմամբ, որ խզում է նաեւ զգայական ընկալումները. այնտեղ է հոգին գրկախառնում Սիրեցեալի հետ: Այս առումով, հետաքրքրական է Իվոյի մտքի համեմատումը Աստուծոյ տեսութեան մասին (*De videndo Deo*) Սբ. Օգոստինոսի ուսուցումների հետ, որոնց հետ Իվոն համաձայն չէ միայն մի կէտում. թւում է՝ թէ Իվոն բացարձակ կերպով մերժում է մահից առաջ Աստուծոյ էութիւնը տեսնելու հնարաւորութիւնը, ինչը որ, Սբ. Օգոստինոսի հեղինակութեան թելադրանքով, միջնադարեան մտածողներն ընդունում են՝ թէ շնորհուել է Պօղոս Առաքեալին ու Մովսէս Մարգարէին: Իվոն այստեղ խօսում է մի տեսողութեան մասին, որը ոչնչով մաս չի կազմում ճանաչողական պատճառաբանումների աղիւսակներին.

խօսքը չի վերաբերում էութեան տեսութեանը, ո՛չ էլ հոգեւոր տեսութեանը, պատկերների շնորհիւ՝ որոնք նման են մարմիններին: Իվոն առանց պատճառաբանելու առաջարկում է Աստծոյ տեսութեան ա՛յլ եղանակներ, որոնք ամբողջովին միատիկ բնութեան են. խօսքը վերաբերում է սիրոյ աչքին, որը տեսնում է սիրավառ գորովի եւ զգացումների բազմազանութեան համաձայն, որոնց միջոցով ձգտում է միանալու իր սիրոյ առարկային:

Ինչ վերաբերում է գրութեան ոճին, հայերէնի թարգմանելիս չէինք կարող որոշ տեղերում չդաւաճանել բնագրի տառացի արտայայտութիւններին, որոնք իվոն բաւական գործածում է՝ բանաստեղծական գեղեցկութիւն տալով շարադրանքին. բայց, ցաւոք, այդ արտայայտչամիջոցներն ու բառախաղերը անթարգմանելի են:

Ո՛վ Աստծոյ քաղցր խօսակցութիւն հոգու մէջ եւ հոգու հետ, որ ծնւում է առանց լեզուի ու առանց շուրթերի հնչման, եւ որ առանց ականջների՝ լսւում է լռութեան մէջ: Այն լսում է միայն նա՝ ով խօսում է, եւ նա՝ ում խօսում է: Օտար ամէն ոք բացառուած է այս խօսակցութիւնից (§ 37):

ՍԻՐՈՅ ՄԱՍԻՆ ՍԷՎԷՐԻՆՈՍԻՆ ՌԻՂՂՈՒՎԾ ՆԱՄԱԿՐ

1. Յիսուս Քրիստոսի սրտում սիրեցեալ ընկերոջս: «Թող Փեսայի ձախ ձեռքը գլխիդ տակ լինի, իսկ աջ ձեռքով թող գրկի քեզ» (Երգ 2, 6; 8, 3): Սիրոյդ շարունակական խնդրանքները, թանկագին իմ Մէվէրինոս, որ վանականների մէջ ամենաընդունակն ես սիրելու, ստիպում են ինձ մի քանի խօսք գրել քեզ սիրոյ մասին եւ համարձակուել ուժերիցս գերիվեր ու փոքրկութեանս սահմաններից դուրս. եւ աւելին, ինչպէս կարծում եմ՝ թէ հասկանում եմ, բաշխել ոչինչ եւ տալ այն՝ ինչ չունեմ¹: Ասում եմ քեզ, թէ հոգիս դժուարութեամբ է խաղաղուում սիրոյ մասին խօսելիս, որովհետեւ անդրադառնում է, որ նրա մասին արժանավայել կերպով խօսելու համար բաւական չեն ո՛չ սիրտը, ո՛չ լեզուն: Իրօք, ինչպէ՞ս կարող է սիրոյ մասին խօսել մէկը, որ չի սիրում, որ ենթակայ չէ սիրոյ սաստկութեանը: Ուրիշ հարցերի վերաբերեալ բաւականաչափ առատ նիւթ կարելի է գտնել գրքերում, մինչ սէրը մի իրականութիւն է, որ կա՛մ ամբողջովին սրտի մէջ է, կա՛մ էլ ուրիշ ոչ մի տեղ չէ, որովհետեւ իր քաղցրութեան գաղտնիքները դրսից չեն փոխադրուում ներս, այս ներսից բխում են դէպի դուրս: Սիրոյ մասին, հետեւաբար, արժանավայել կերպով խօսում է միայն նա՝ ով արտաքուստ արտասանում է խօսքերն այնպէս՝ ինչպէս սիրտն է ներքուստ թելադրում իրեն: Այս իսկ պատճառով, մի՛ գարմացիր, որ սիրոյ մասին կը նախընտրէի լսել ուրիշ որեւէ մէկին, քան թէ ես ինքս խօսէի նրա մասին: Նրան, հաւատա՛ ինձ, կ'ուզէի լսել, նրան՝ ով ընդունակ կը լինէր լեզուի գրիչը սրտի արեան մէջ թաթախելու, որովհետեւ ճշմարիտ ու մեծարելի ուսմունք է՝ երբ լեզուն ասում է այն՝ ինչ խիղճն է թելադրում, սէրն է ներշնչում եւ հոգին՝ գտում: Սխալուում ես, եթէ ինձ ընդունակ ես համարում. կամ աւելի ճիշտը՝ ես ինքս եմ սխալուում: Անշուշտ, սա քո կողմից բարեպաշտութիւն է այն առաքինութեան նկատմամբ՝ որն «ամէն բանի հաւատում է»², քանի որ ինձ գնահատում ես շատ աւելի՝ քան իրականում արժանի եմ: Ինձ համար, մինչդեռ, դժուարին է ընդունելը, որ վերագրուի ինձ մի բարութիւն, որ չունեմ, քանի որ նոյնիսկ եթէ ինչ որ մի բան ունենայի, հաւանաբար աւելի լաւ կը լինէր՝ եթէ անգիտացուէր: Երբ, իրօք, «սիրում է մի բան՝ որ գոյութիւն չունի, այլ որ կարծում է՝ թէ գոյութիւն ունի, ոչինչ են ո՛չ սէրը, ո՛չ էլ սիրողը, այլ միայն այն՝ որ սիրուած է»:³ Ո՛վ սիրոյ մեծ առաքինութիւն, որ գոյութիւն չունեցող բաներն արժեւորում ես այնպէս՝ ինչպէս գոյութիւն ունեցողները: Ո՛վ հզօր առաքինութիւն, որ առանց զրկելու՝ ամէն բան յափշտակում ես, ամէն բան քոնն ես դարձնում՝ առանց որեւէ մէկից իրենը վերցնելու, որովհետեւ բարիքը, որ սիրում ես որեւէ մէկի մէջ, սիրելով ես քոնը դարձնում: Եւ այո՛ կարող է պատահել, որ ապարդիւն կերպով բարեգործես, բայց բացարձակ կերպով անհնարին է, որ ապարդիւն կերպով սիրես³:

2. Ահա ուժը սիրոյ, որ փնտրում ես, եւ որին ոչ ոք չի կարող դիմադրել: Ամէն բան հպատակեցնում է իրեն, ամէնքին ստիպում է համաձայնուել իր յառաջխաղացմանը, թշնամիներին յաղթում է սիրով եւ նրանց իր բարեկամներն է դարձնում մինչեւ իսկ նրանց կամքին հակառակ: Այսպիսով, թէեւ կարող է մրցակիցներ ունենալ, թշնամիներ

¹ Քրիստոնէական գրականութեան մէջ դասական սկզբնաւորութիւնն է, որով հեղինակը յայտնում է քննարկուելիք նիւթի համեմատ սեփական անընդունակութիւնը: Բայց պէտք է ուշադրութիւն դարձնել, որ այս անընդունակութիւնը իմացական կամ մշակութային բնոյթի չէ, այլ գուցէ հոգեւոր: Այսինքն, իմաստն այն է, որ սիրոյ մասին կարող է խօսել միմիայն նա՝ ով փորձառութեամբ զգացել է նրա սաստկութիւնը:

² Խօսքն անկասկած վերաբերում է սիրոյ առաքինութեանը, 1Կր 13, 7 հատուածի համաձայն, որից էլ ներշնչուած յաջորդ պարբերութիւնը:

³ Այստեղ հակասութեան մէջ են դրուում գործելը եւ սիրելը. մինչ գործելը կարող է նաեւ չհասնել ցանկացուած նպատակին, սիրելն ինքնըստինքեան արդէն երբեք ապարդիւն չէ: Իվոյի այս մտքում կարելի է տեսնել 1Կր 13, 1-3 հատուածին տրուած մի մեկնաբանութիւն. ինչպիսի քաջագործութիւն էլ կատարեմ, առանց սիրոյ՝ ոչինչ էլ չեմ շահում:

չունի բացարձակ կերպով: Միակն է, իրօք, որ նեղութիւնների դիմաց չի նուազում, որովհետեւ «համբերատար է». ստացած նախատինքների փոխարէն հաւասար չափով չի հատուցում, որովհետեւ «բարեգութ է». ուրիշների երջանկութեան պատճառով չի տառապում, որովհետեւ «նախանձոտ չէ». խղճահարութիւնները նրան չեն խայթում, որովհետեւ «անարգարութեամբ չի գործում». պատիւներ ստանալիս չի հրճւում, որովհետեւ «գոռոզ չէ». չի ձգտում առաջինը լինելու, որովհետեւ «յաւակնոտ չէ». ազահութեան ստրուկը չի դառնում, որովհետեւ «իր շահը չի փնտռում». նախատինքների պատճառով չի բարկանում, որովհետեւ «զայրացկոտ չէ». չի ապականւում չարամիտ կասկածներով, որովհետեւ «անարգարութիւններն իրեն վայելք չեն պատճառում». սխալների պատճառով չի կուրանում, որովհետեւ «միշտ փնտռում է ճշմարտութիւնը». հալածանքների բովում չի թուլանում, որովհետեւ «ամէն ինչի դիմանում է». նենգութեամբ չի կարծրանում, որովհետեւ «ամէն բանի հաւատում է», թէեւ ո՛չ ամէնքին⁴. չի ենթարկւում անյուսուցիչ տուայտանքներին, որովհետեւ «յոյսը միշտ վառ է պահում». չի տրւում անհամբերութեանը, որովհետեւ «ամէն բանի համբերում է». մահուամբ վրայ հասնող բաժանումով չի ընդմիջւում, որովհետեւ «անմահ է» (1 Կր 13, 4-7):

Ա. Սիրոյ անյաղթահարելի ուժը

3. Մի՞թէ ճիշտ չէ, որ մահից յաղթուած չէ նա՝ ով «մահուան չափ հզօր է» (Երգ 8, 6), մանաւանդ թէ՛ մահից աւելի հզօր է⁵. նա՝ որ մինչեւ իսկ մահուանը ստիպեց մեռնել, երբ մահուան ենթարկուեց Փրկիչը: Ո՛վ սիրոյ անյաղթելի առաքինութիւն, որ Անյաղթելիին իսկ յաղթեցիր, եւ Նրան, ում ամէն բան ենթակայ է, որոշ իմաստով ենթակայ դարձրիր ամէնքին, երբ սիրուց յաղթուած՝ Աստուած «խոնարհեցրեց իր անձը, ընդունելով ծառայի կարգավիճակը» (Փլպ 2, 7), դառնալով ոչ միայն մարդ, այլ նաեւ «մարդկանց մէջ ամենախոնարհը եւ ժողովրդից մերժուածը» (Սղմ 22, 7): «Մեր հանդէպ տաճած սիրոյ գերառատութիւնից մղուած» (Եփս 2, 4), չկարողացաւ «իր զայրոյթի մէջ զսպել իր ողորմութիւնը» (Սղմ 77, 10), այսինքն՝ «իր մտերիմների համար» թշնամիների ձեռքը յանձնել իր կեանքը (Յվհ 15, 13), իր մտերիմներից հեռացնելու համար մահուան սարսափն ու իշխանութիւնը: Իսկ եթէ հզօր գտնուեց Աստծոյ դէմ, քանի՞ցս առաւել կը գերակշռի մարդկանց նկատմամբ:

4. Այստեղից է բխում հաւատացեալների սրտի այն անսասան հաստատութիւնը, որով արհամարհելով հալածանքները եւ ոտնակոխ անելով մահը, մահուան երախի միջով ուրախ վերադառնում են երկնային հայրենիք: Ուրախանում են նրանք՝ ովքեր ընդառաջ են գնում մահուանը եւ մահուանը նախատում են, ասելով. «Ո՛ր է, մահ, քո խայթոցը» (1 Կր 15, 55)⁶: Այլեւս խայթոց չէ, այլ բերկրալի մի ճիշ, այն պահին՝ երբ քո միջով ելքի լայն ու երանելի ճամփայ ես բացում թշուառութիւնից դէպի արքայութիւն: Սէրն այդ պահին այնպէս է անում, որ հաւատացեալներն այլեւս չեն վախենում Նրա համար մեռնելուց, այլ ընդհակառակն՝ փափաքում են միանալ Նրան, ումից տեսնում են իրենց

⁴ Ամէն բանի հաւատում է, բայց միմիայն Աստծուց: Յիրաւի, չի ասում. «Ամէնքին հաւատում է»: Բացատրական այս յաւելումով, հեղինակը կամենում է խոստովել հնարաւոր սխալ հասկացողութիւնից, որը կարող է առաջանալ Պօղոս Առաքեալի տուեալ արտայայտութեան մէջ պարունակուած երկիմաստութիւնից:

⁵ Հմմտ. Սբ. Բեռնարդոս, *Sermo I in festo annuntiationis beatae Mariae Virginis* 12; PL 183, 389A. *Epistola CCCLXXIV* 2; PL 182, 579D. *De mor. et off. episcoporum* 3, 11; PL 182, 818B.

⁶ Ուշադրութիւն պէտք է դարձնել այն հանգամանքի վրայ, թէ հեղինակն ինչպէս է այս պարբերութեան սկզբում շարունակ շեշտը դնում «մահ» բառի վրայ: Այստեղ խօսւում է մարտիրոսների մասին: Նախորդ պարբերութիւնում տեսանք՝ թէ ինչպէս է սէրը անյաղթելի ուժով տիրում Աստծուն, որը մարմնանում եւ մահանում է մարդկանց սիրոյ համար. այս պարբերութիւնում, մինչդեռ, տեսնում ենք՝ թէ ինչպէս է սէրը գրաւում մարտիրոսներին, որոնք կամենում են փոխհատուցել Աստծոյ սիրոյն:

սիրուած այն աստիճան, որ կամեցաւ նախատինքների մէջ կըրուած մահուան դատապարտուել, որպէսզի իրենք չմահանային: Նրանք, յիշուելի, ովքեր Քրիստոսի մէջ հիանում եւ փարուում են սիրոյ այն գերառատութեանը, որով, երբ «իր առջեւ դըրուած էր փառքը», Նա «մարդկային ամօթի զգացումն արհամարհելով, իր վրայ առաւ խաչը» (Եբր 12, 2), մտովին տանջուում են, կարծելով՝ թէ չեն փոխհատուցում հաւասար չափով, Նրա չարչարանքների նախատինքներից ինչպէս փշերից խայթուած, կարծես առանց արգելակների քաշուում են դէպի սիրոյ անդունդը, սիրոյ անյատակ խորութիւնները, եւ ամբողջովին եւ միմիայն սա՛ են փափաքում. «Աստուծոց ստացածս բարիքների փոխարէն ի՞նչ եմ հատուցելու» (Սղմ 116, 12): Եւ այս առողջ ու սուրբ մտախախտութիւնից տարուած, կարծում են՝ թէ քիչ են սիրում, այնքա՛ն որ սիրուած են:

5. Իրօք, սիրոյ սաստիկ ուժը չի արգելակուում բանականութեան կողմից, որովհետեւ ինչպէս վկայում է Առաքեալը՝ «որեւէ ճանաչողութիւնից վեր է» (Եփս 3, 19): Վեհութեան առջեւ չի սարսափում, որովհետեւ «դուրս է նետում երկիւղը» (1Յվհ 4, 18). վշտակրութիւնների մէջ չի նուաղում, որովհետեւ նեղութիւնների բովում կատարելագործում է: Մի խօսքով, ամենակարող առաքինութիւն է, որ հզօր է դարձնում նաեւ թշուառութիւնները, մինչ հոգու համար օգնութեան է վերածում այն՝ ինչը նախապէս պատրաստուել էր վնասելու համար: Սէրն իրենց որպէս զրահ ունենալով, Քրիստոսի զինուորները մարտնչում են առանց վախի. յաղթանակի վերաբերեալ կասկածներ չունենալով, վստահասիրտ յառաջանում են վտանգների միջով, առանց վախենալու սատանայից կամ մարդկանցից: Այս իսկ պատճառով, Պօղոսը, թուարկելուց յետոյ այն բազմաթիւ վտանգները, որոնց դէմ մեծ յաղթանակ էր տօնել, աւելացնում է յաղթանակի պատճառը, ասելով. «Եւ այս բոլոր բաները յաղթահարում ենք շնորհիւ Նրա՛ ով սիրեց մեզ» (Հռմ 8, 37): Ամէն կողմից ատամներ կռճատացնող թշնամիներով, ամէն կողմ սաւառնող նետերով ու կայծակնահար տէգերով շրջապատուած, առանց մտահոգուելու, նա քուն է մտնում սիրոյ ազդեցութեամբ, որն է միայն ի գօրու «հանգցնելու սատանայի կիզիչ նիզակները» (Եփս 6, 16), բայց որին «բազում գետերը չեն հանգցնում» (Եբգ 8, 7): Վերջում, սէրը թաղում ու ջնջում է մեղքերի բազմութիւնը: Ուրեմն, փորձութիւնների «մահամերձ ճանճերի» դէմ չի՞ գերակշռի (Ժող 10, 1): Աւելի հզօր է եւ հպատակեցնում է նաեւ գերուսացիներին ու Քանանի տոհմի միւս ժողովուրդներին, եւ վերածում է նրանց իրեն հարկատու ծառաների ու իր գօրութիւնը կիրարկելու միջոցների:

6. Անկասկած, ուժի աւելի մեծ նշան է ոտքի կանգնած թշնամուն գետին տապալելը, քան թէ նրան հարուածելը՝ մինչ ջանում է ոտքի կանգնել: Նմանապէս, սիրոյն բնորոշ չէ փորձութիւնները ոչնչացնելը, այնպէս՝ որ չծնունեն անգամ, այլ նրանց գետին տապալելը երբ կը ծնունեն, որպէսզի չյառաջադիմեն: Սրա համար, այն չպէտք է անուանել հզօր առաքինութիւն, այլ՝ առաքինութեան հզօրութիւն, որովհետեւ իսկապէս առաքինութիւն լինելու համար՝ բոլոր առաքինութիւնները սիրուց են ստանում իրենց հզօրութիւնը: Սէրը հաւատքի կեանքն է, յոյսի անասանութիւնը եւ բոլոր առաքինութիւնների սիրտն ու աւիւնը: Սէրը կանոնաւորում է կեանքը, բոցավառում է զգացումները, թելադրում է արարքները, չափաւորում է չափազանցութիւնները, կարգաւորում է սովորոյթները, կենսունակութիւն է ներշնչում ամէն ինչի եւ ամէն ինչի վրայ գերակշռում է: Սէրը ամենակարողութիւնն անգամ վերածում է, որոշ առումով, անկարողութեան:

7. Մի՞թէ սա չէ այն առաքինութիւնը, որ գերակշռեց Մովսէսի անձում որպէս ամենահզօրը, երբ ընդդիմացաւ աստուածային արդարութեանն ու գօրութեանը: «Թող, – ասաց Տէրը, – որ բարկութիւնս բորբոքուի այս ժողովրդի դէմ» (Ել 32, 10): Լսում ես «Թող՝ որ ...», բայց մի՛ կարծիր՝ թէ Աստուած զսպուած է սիրուց բացի ինչ որ մի ուժից: «Ո՞ւմ սիրոյ», հարցնում ես ինձ: Այն հաւատարիմ ծառայի, որն աւելի մեծ դարձած ժողովրդի մէջ մերժեց աւելի մեծ ու աւելի փառաւոր դառնալ, զսպուելով ո՛չ թէ մարդկային զգացումներից, ինչպէս պատահում է սովորաբար, այլ որպէսզի հայհոյիչների թունաւոր նիզակները չյարձակուէին Աստուծոյ փառքի դէմ: «Աղաչում են քեզ, – ասաց Մովսէսը, – թող եզիպտացիները չասեն. ”Շատ լաւ, նրանց անապատ տարաւ՝ լեռան լանջին նրանց

սպանելու համար (Ել 32, 12), եւ չկարողացաւ տանել նրանց այն երկիրը, որ խոստացել էր նրանց»։ Եւ ի՞նչ պատահեց: Զօրութիւնը ներգործելուց հրաժարուեց, հրաժարուեց նաեւ արդարութիւնը, երբ այսքան մաքուր սրտից բխած սէրը, խնդրելուց աւելի, հրահրում էր: Ա՛հ, քանիցս ծանր ենք զգում այսպիսի մարդկանց պակասը, որոնք կ'ընդդիմանային Տիրոջը ի նպաստ մեր յանցանքների ներման, կը հանդարտեցնէին Նրա զայրոյթը եւ կը հեռացնէին մեզնից պատիժը: «Չկայ, – ասում է մարգարէն, – մէկը, որ կանչի Քո Անունը, որ ոտքի կանգնի ու ընդդիմանայ Քեզ» (Ես 64, 6): Միակ ուժը, որ կարող է ընդդիմանալ Աստծուն եւ զսպել Նրան, սէրն է: Աստուած ո՛չ միայն յանդուրժում է, որ սէրը զսպի Իրեն, այլ մարգարէի ձայնով ուղղակի բողոքում է, երբ չի գտնում մէկը, որ սիրոյ քաղցրութեամբ զսպի Իրեն. «Մարդկանց մէջ փնտռեցի մէկը, որ իմ ու իր միջեւ պատնէշ դնէր եւ իմ առջեւ կանգնէր, իմ դէմ, իր երկրի բարեքի համար, որպէսզի ցիրուցան չանէի, բայց չգտայ այդպիսի մէկը» (Եզկ 22, 30): Ճիշտ ինքն Աստուած, որին անշուշտ բնորոշ է կարեկցանքը եւ հարազատ չէ վրէժխնդրութիւնը, փնտռում է մէկը, որ ընդդիմանայ Իր զայրոյթին: Այս «գործը, – ասում է մարգարէն, – Իրեն հարազատ չէ» (Ես 28, 21): Ո՞ր գործը: Ճիշտ վրէժխնդրութեան եւ բարկութեան գործը:

8. Սէրն, ուրեմն, իր ուժով զսպում է Աստծոյ արդէն տարածուած բազուկը, որպէսզի չհարուածի. իր ոտքերի ներքոյ փոշիացնում է սատանային եւ «թշնամիների գլխին հրացայտ ածուխներ է կուտակում» (Հով 12, 20): Հզօր է ո՛չ միայն «մարմնի ու արեան դէմ, այլ նաեւ այս աշխարհի ստուերների իշխանութիւնների ու տէրութիւնների, երկնքի տակ եղող չար հոգիների դէմ» (Եփս 6, 12): Հզօր է հակառակութիւնների մէջ, առաւել Հզօր՝ նպաստաւոր պարագաներում: Իրօք, միմիայն Քրիստոսի սէրն է արհամարհում ու թքով ծածկում նպաստաւոր ու աննպաստ բախտի խաբէութիւնները, սնուցանելով մի առաւել ախորժելի քաղցրութեամբ, որի համեմատ՝ բոլոր քաղցրութիւնները դառն են, բոլոր ուրախութիւնները՝ թախիծ, բոլոր գեղեցկութիւնները՝ խորշելի, բոլոր վայելքներն՝ անհամ: Ահա, թող սիրոյ անյաղթահարելիութեան մասին մինչ այժմ ասուածները բաւարարեն քեզ, թէեւ բաւական չեն՝ նիւթի առատութեան համեմատ, որն արտասովոր կերպով շատ է: Այնուամենայնիւ, այսքանը բաւական է խորհրդածութիւններիդ համար: Այժմ անցնենք սիրոյ անյագութեանը:

Բ. Սիրոյ անյագութիւնը

9. Սէրն անասանելիօրէն հզօր է դարձնում այն քաղցրութիւնը, որն Աստծուն սիրահարուած հոգին զգում է եւ որից մի քիչ համտեսելուց յետոյ անգամ՝ մոռանում է այն բոլոր իրողութիւնները, որոնք կարող են սիրուել այս աշխարհի արհամարհմամբ միայն, իմանալով՝ որ հնարաւոր չէ գտնել Սիրեցեալին առաջ՝ քան կ'անցնեն, որոշ գերակայ անջատմամբ դիտուած, «այս անցողիկ աշխարհի երեւոյթները» (1Կր 7, 31): Այստեղից հոգին, ամբողջովին ինքն իր մէջ ամփոփուելով, չի յառաջանում աստիճաններով կամ վերամբարձ քայլերով, այլ յանկարծակի յափշտակութիւններով կամ ինքն իրենից դուրս գալով, սաւառներով եւ ո՛չ թէ յառաջադիմելով, տարւում է դէպի երկնային վեհ գաղտնիքները: Յիրաւի, Պօղոս Առաքեալի մասին նոյնպէս չի ասուած՝ թէ բարձրացաւ մինչեւ «երրորդ երկինք», այլ՝ «յափշտակուեց» (2Կր 12, 2): Այս յափշտակութեանը ենթարկուելը նշանակում է գրեթէ աստուածանալ⁷, մինչ աստուածային սիրով լիովին արբեցած հոգին մոռանում է ամէն բան եւ ամբողջովին ուղղուում է դէպի Աստուած, վայելելով այն՝ ինչը «ոչ ոք չի ճանաչում, այլ միայն նա՝ ով

⁷ Հոգու աստուածացումը – որը յոյն Հայրապետներին պատկանող գաղափար է եւ որը Սբ. Օգոստինոսի կողմից վերածուել է այն սկզբունքին, որի համաձայն՝ հոգին աւելի ներկայ է այն իրականութեան մէջ, որին սիրում է, քան այն մարմնի մէջ, որին կենսագործում է – այստեղ միստիկ եղանակով արտայայտում է «գրեթէ աստուածանալ» ձեւով. բառեր, որ արդէն ներկայ են Սբ. Բեռնարդոսի մօտ (De diligendo Deo 10, 28):

ստանում է այն» (Յյտ 2, 17): Արդ, երբ մասնակցում է այդ երանութեանը, բացարձակ կերպով անհնարին է, որ ենթակայ լինի նաև այստեղի թշուառութեանը: Այս երկու իրականութիւններն, իրօք, երբեք չեն կարող միասին լինել:

10. Այսուամենայնիւ, թէեւ մահկանացուներին երբեմն շնորհւում է հասնել սիրոյ այս աստիճանին, նրանց բացարձակ կերպով արգելուած է այդ վիճակում մնալ երկար ժամանակ, առնուազն մինչեւ այն օրը՝ երբ ապականացու զգեստները մի կողմ դնելուց յետոյ՝ անկաշկանդ դուրս կը գան «դէպի Աստծոյ որդիների փառքի ազատութիւնը» (Հուս 8, 21): Հակառակ, սակայն, այս արգելքին, նրանք ճիշդ են գործադրում եւ հմայուած են փափաքից՝ տեսնելու դէմքը Նրա՝ ում, մարգարէի խօսքերով, Հայրը կարգեց «որպէս աղամանը» (Չաք 7, 12), որպէսզի սիրոյ կապերի մէջ քաշել կարողանար նաև այն՝ ինչը կարծր է երկաթի նման: Թէեւ այս հմայքը որոշակի նուրբ բռնութիւն է գործադրում, այնուամենայնիւ՝ աւելի մեծ չափով ապացուցում է մահկանացութեան անկարողութիւնը, եւ այս ծանրութեան ներքոյ կքուած թշուառ հոգին յաճախակի ընկնում է իր թուիչքից վար ու նուաղում է ձեռնարկուած գործի մէջ, եթէ օգնութիւն չի ստանում Նրանից՝ ով «երկրից բարձրացած, ամէնքին քաշում է դէպի Ինքը» (Յվհ 12, 32): Այս իսկ պատճառով, սիրող հոգիները, որոնք տակաւին արգելափակուած ու ցրուած են մարմնի ապականութեան մէջ, յաճախ ընդունում են Աստծոյ այցելութեան ուրախութիւնը, բայց ո՛չ առատօրէն, քանի դեռ տակաւին շնորհուած չէ՝ որ լինի ամբողջական ու մնայուն: Սա է պատճառը, որ թոււմ է՝ թէ Աստուած երբեմն ուրախ մի խաղով «կատակում է մարդկանց որդիների հետ» (Առկ 8, 31). երբ նրանք կարծում են՝ թէ իրենց ձեռքում է, Նա փախչում է նրանց ձեռքից. երբ հետապնդում է, թողնում է՝ որ բռնեն իրեն, բայց կրկին բաժանուելով՝ անհետանում է, մինչեւ որ մէկ անգամ եւս, արցունքներով ու աղօթքներով կանչուելուց յետոյ, վերադառնում է: Այսպիսով, եթէ այցելութիւնն ուրախացնում է, հերթափոխումը չարչարում է:

11. Բայց պատկերացրու՝ թէ ինչպիսի ապշանքի է մատնուում հոգին, երբ հեռացում է այդ քաղցրութիւնից ու կրկին բանտարկուում է զգայարանների այս կապանքներում: Կարծես հոգիների հայրենիքից դէպի մարմինների հովիտը վար նետուած, թոււմ է իրեն՝ թէ ընկել է մի անծանօթ աշխարհ, նախորդից շատ տարբեր, ուր սէրը սառն է եւ տիրում է զգայականութիւնը, մտքի աչքը խաւարած է եւ անկաշկանդ իշխում են մարմնի զգացումները: Յայնժամ, մոլորուած, խոր հառաչանքներ է արձակում, աղերսում է այն վայրը՝ որտեղից կարող է ստանալ իր երանութիւնը: Իրօք, որքան աւելի հաճելի էր այն՝ ինչ զգացել էր, սրտի այնքան աւելի ցաւով է ընդունում նրանից զրկուած լինելու փաստը: Իրօք, սիրուած իրականութիւնից զրկուելը առաջացնում է փափաքի յաւելում, եւ այն՝ ինչ փնտռում է առաւել բոցավառ տենչով, պակասում է առաւել մեծ վշտով: Սա սիրոյ ուժասպառումն է⁸, որն ա՛յլ բան չէ, եթէ ոչ՝ անհամբեր ցանկութեան վիշտը, որի սաստիկ հարուածներից սիրողի միտքը չի կարող խուսափել այն ամբողջ ժամանակ, որի ընթացքում բացակայում է սիրոյ առարկան: Ո՛վ ներկայ բացակայութիւն եւ բացակայ ներկայութիւն Նրա՝ ով միաժամանակ կորցնում է եւ շարունակում է ունենալ:

12. Եթէ չեմ սխալուում, ի գուր է ջանալ մեղմացնել ողբացող հոգու վիշտը եւ չափաւորել տրտմութիւնը, երբ ընդհակառակն՝ ներքուստ պէտք է բժշկել սիրոյ քաղցր վէրքը: Մարդկային ոչ մի մխիթարութեամբ, ուրեմն, չի նուազում գաղտնի վշտակրութեան սրբազան դառնութիւնը, երբ քաղցրութեան ներանձնական համեստումը հեռացուելով՝ արտաքին ոչ մի իրականութիւն ունակ չէ մխիթարելու, այլ ճիշտ հակառակը, երանելի Յոբի խօսքերի համաձայն, «չարչարող եւ նեղացուցիչ է համարում բոլոր մխիթարողներին» (Յոբ 16, 2): Սա զգացել էր նա՝ ով ասում է. «Հոգիս մերժում է մխիթարութիւնները. յիշում եմ Աստծուն եւ Նա է իմ վայելքը» (Սղմ 77, 3-4): Երջանիկ տրտմութիւն, որ բխում է ո՛չ թէ արարածից, այլ Արարչից, եւ որ չի արտասուում ներկայ կեանքի նեղութիւնների համար: Աստծուն որպէս ամենայն մխիթարութեան մխիթարիչ

⁸ Սիրոյ ուժասպառ, հալումաչ լինելու պատկերը վերցնուած է Երգ Երգոցի 2, 5 եւ 5, 8 հատուածներից, եւ գործածուած է ամբողջ միաստիկ գրականութեան մէջ:

ունենալուն իսկապէս արժանի է նա՝ ով հրաժարուում է մխիթարուել վաղանցուկ բարիքների առատութեամբ: Այս իսկ պատճառով, Աստուծոց այս կողմ ոչինչ չկայ՝ որով կարողանայ մխիթարուել նա՝ ով սովորել է Աստուծոց բացի չսիրել ոչինչ: Թող ուրիշներն ունենան իրենց ունայն ու զանազան մխիթարութիւնները, որոնց վերաբերեալ ասուած է. «Վա՛յ ձեզ, հարուստներ, որովհետեւ այստեղ արդէն ունէք ձեր մխիթարութիւնը» (Ղկս 6, 24): Նրա համար միակ մխիթարիչը Նա է՝ ով իր մէջ է բնակուում, Աստուած—Սէրը, որն արդարներից թէեւ երբեք չի հեռանում արժանիքի առումով, այնուամենայնիւ՝ նրանցից յաճախ հեռանում է մխիթարութեան առումով: Աւելի օգտակար է առաջինը, աւելի հաճելի է երկրորդը: Եւ այսպէս, Աստուած մեր հետ է, բայց թաքնուում է, մինչ այն քաղցրութիւնը, որ ունենք, բայց որ թաքնուում է, հազիւ է հպուում սրտի զգայարանին:

13. «Երբ իրեն սպասել է տալիս», Նա՝ ում փափաքում է մարդու հոգին, վերջինս չի ննջում կամ քուն մտնում անմիտ կոյսերի նման (Մտթ 25, 5), այլ յաճախակի հառաչանքներից ցնցուած եւ իր իսկ հեծեծանքներից արթնացած՝ այլեւս չի կարողանում ծածուկ պահել թախիժը, ո՛չ էլ թաքցնել այն հուրը, որ ցաւագին այրում է իր սիրտը: Որոշումներ չի կայացնում, չի յանձնում բանականութեանը, չի ամաչում, անգիտանում է չափն ու կարգը, եւ ներքուստ տրտմում է՝ ամբողջովին եւ միմիայն մտածելով՝ թէ ինչպէս կարող է հնարաւորին չափ շուտով վերադառնալ քաղցրութիւնը Նրա՝ ով, որքան արագ էլ լինի, թւում է չափազանց դանդաղ: Սա այն է, ով քաղցրագոյնդ իմ, որ մի քանի անգամ հարցնում էիր ինձ երանելի Օգոստինոսի խօսքերի վերաբերեալ. «Աստուծոյ սէրը մխիթարութիւն չի ընդունում անկարելիութիւնից»⁹: Իւրաքանչիւր փափաք, իրօք, չափաւորում է բանականութեան կողմից, երբ փափաքուած իրականութիւնը անկարելի է լինում ստանալ: Բայց սիրոյ սաստկութիւնը չի արգելակում տիրանալու անկարելիութեան զգացումից: Իրօք, թէեւ որեւէ մարդու համար անկարելի է, որ երկրային բնակարանով¹⁰ ծանրացած ու ցեխերի մէջ թաւալուած հոգին լիակատար ու ամբողջական կերպով վայելի այդ երջանկութիւնը, այնուամենայնիւ՝ վայելելու փափաքի մէջ այրուելու ու եռալու անկարելիութիւնը որեւէ մխիթարութիւն չի պարգեւում սիրողին. այնուամենայնիւ, թէեւ բանականութիւնը յաղթում է այս ցանկութիւնից, յամենայն դէպս Աստուած չի վշտանում, քանի որ թւում է՝ թէ նմանօրինակ մի բան է յանձնարարում իր պատուիրաններից մէկում. «Պիտի սիրես, — ասում է, — քո Տէր Աստուծուն ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ, ամբողջ մտքովդ» (Զօր 5, 5; Մտթ 22, 37; Մրկ 12, 30; Ղկս 10, 27): Բայց եթէ մի կողմից յստակ է, որ այս մահկանացու կեանքում, կամ աւելի ճիշտը՝ այս կենսական մահուան ընթացքում սա չի կարող գործադրուել ոչ ոքի կողմից, միւս կողմից անհրաժեշտ է, որ փափաքուի բոլորի կողմից: Այս իսկ պատճառով, արդար հոգու նկարագրութեան մէջ նոյնպէս ասում է. «Տիրոջ պատուիրանները գործադրելիս չափազանց կը փափաքի» (Սղմ 112, 1): Ի՞նչ է նշանակում չափազանց փափաքելը, եթէ ոչ՝ կամենալ հնարաւորութեան չափից աւելի: Այս իմաստով եւ համարում գրուած այս խօսքերը. «Օրիորդները չափազանց սիրեցին քեզ» (Երգ 1, 2):

14. Անշուշտ վիթխարի ու անսահմանափակ է Աստուած, դէպի որն է ձգտում նրանց սէրը, այնպէս՝ որ ոչ մի սահման կամ չափ չկայ սիրոյ համար: Այսպէս է սիրում, հետեւաբար, հոգին նրա՝ ով սիրում է. ո՛չ թէ կարողացածից, այլ կամեցածից նուազ: Եւ ոչ մի սփոփանք չի ստանում այս անկարելիութեան համոզումից, այլ աւելի՝ կրում է ցանկութեան մի աճ: Ժիշտ ասում է. «Յանկացաւ հոգիս ցանկանալ քո արդարացումները» (Սղմ 119, 20): Փափաքելով չի կարող յազենալ նա՝ ով միմիայն ցանկացաւ ցանկանալ: Հոգու քաղցը, յիրաւի, ցանկութիւնն է: Եւ այսպէս, Աստուծուն իսկապէս սիրելով, հոգին չի յազենում սիրուց, որովհետեւ Աստուած սէր է եւ Նրան սիրել՝ նշանակում է սիրել սէրը: Սիրել սէրը. շրջանակը փակում է եւ սէրն այլեւս վախճան չունի:

⁹ Իրականում, մէջբերուած հատուածի հեղինակն է Կեղծ Հերոնիմոսը, Epistola IX ad Paulum et Eustochium. De assumptione Beatae Mariae 13; PL 30, 137A.

¹⁰ Ի նկատի ունի մարմինը:

15. Տեսնում ես, հետեւաբար, թէ ինչպէս անգերազանցելի է սէրը, որ գերազանցում է ամէն ինչի, եւ այնքան անյազ է, որ ամէն բան կլանում է, եւ առատութիւնից ծնում է աղքատութիւն, մինչ նախապէս համտեսուած ուրախութիւններից հրգեհուում է է՛լ աւելի մեծ փափաքներով, եւ թէեւ այս ուրախութիւնները տրւում են լիակատար չափով, սակայն երբե՛ք մինչեւ յազեցում: «Ովքեր կը սնուեն ինձնով, – ասում է, – տակաւին քաղց կ'ունենան» (Սիր 24, 29): Ո՛վ բարի Աստուած, Քեզ սիրել՝ նշանակում է Քեզնով սնուել. ինչպէ՞ս ես կազդուրում քեզ սիրողներին, այնպէս՝ որ է՛լ առաւել անյազութեամբ փնտռեն քեզ, եթէ ոչ՝ որովհետեւ Դու ինքդ ես միաժամանակ կերակուրն ու ախորժակը: Ով չի ճաշակել Քեզ, չգիտէ՝ թէ տակաւին ախորժակ ունի: Այս նպատակով ես, ուրեմն, կերակրում մեզ, որպէսզի կամենանք ուտել: «Բարիքներով լիացրեց քաղցածներին», ասում է շնորհներով լի Մարիամը (Ղկս 1, 53): Լիացրեց, ո՛չ թէ յազեցրեց: Սիրոյ բարիքներն, իրօք, այնքան աւելի քիչ են յազեցնում՝ որքան աւելի շատ են լիացնում: «Լիացրեց բարիքներով ...»: Ո՞ր բարիքներով: Չեմ կամենում, որ հարցնես ինձ, թէ որոնք են սիրոյ բարիքները: Համոզուած եմ՝ թէ խօսքը վերաբերւում է այն բարիքներին, որոնց մասին ասուած է. «Առանց քեզ, ով Աստուած, ոչ մի աչք չի տեսել այն՝ ինչ պատրաստել ես Քեզ սիրողների համար» (Ես 64, 4), եւ սրանցից մի ուրիշը. «Աչքը չտեսաւ, կաննը չլսեց, ո՛չ էլ երբեւէ մտաւ մարդու սրտից ներս» (1Կր 2, 9): Գիտես՝ թէ որոնք են սիրովառ հոգիների համար պատրաստուած բարիքները եւ մի՛ կասկածիր՝ թէ դրանց մէջ են սիրոյ բարիքները: Սրանց մէջ են, իրօք, յաւիտենութեան վայելքները եւ երկնային բոլոր քաղցրութիւնները: Սիրոյ մէջ են «խաղաղութիւնը, համբերութիւնը, բարեացակամութիւնը» (Գղտ 5, 22) եւ «Սուրբ Հոգու մէջ բերկրանքը» (Հռմ 14, 17), ինչպէս նաեւ այն բոլոր բարիքները, որոնք Նա յղանում է մտքում եւ դե՛ռ աւելի: Այս բաներն, ասում էի, պատրաստել ես նրանց համար՝ ովքեր սիրում են Քեզ, բայց «թաքցրել ես նրանից՝ ով երկնչում է Քեզնից» (Սղմ 31, 20), մինչեւ որ «սէրը մի կողմ կը նետի երկիւղի քօղը» (1Յվհ 4, 18), որպէսզի կարողանան տեսնել՝ թէ «քանիցս մեծ է քաղցրութեանդ առատութիւնը» (Սղմ 31, 20), որը թէեւ լիացնում, բայց երբեք չի յազեցնում նրանց՝ ովքեր – թէ ճիշտ նրանք կամ ոչ, չեմ համարձակւում ասել – զգեստաւորուել են փառքի երկրորդ պատմուճանով¹¹:

16. Թերեւս կը դիմադրես, ներկայացնելով հետեւեալ հատուածը. «Կը յազենամ, երբ կը յայտնուի փառքը» (Սղմ 17, 15), եւ այն՝ ինչ ասուած է երկնային Երուսաղէմին. «Յազեցնում է քեզ ցորենի առատութեամբ» (Սղմ 147, 14): Բայց դու շատ լաւ դիտես, որ յազեցուածութիւնն այստեղ հասկացւում է որպէս փափաքուած իրականութեան առատութիւն, եւ ո՛չ թէ փափաքի վախճան: Բայց փափաքի վախճանը, ասում են ոմանք, յազեցուածութիւնն է: Յստակ է, որ իսկապէս միշտ քաղց ունեցողները յազեցուած չեն: Բայց իրօք երանելի է այն քաղցը, որը փափաքում է ուտել միայն այն՝ ինչ ունի եւ որն ունի միայն այն՝ ինչի քաղցը որ ունի: Սրանով, ուրեմն, համոզուիր, թանկագինս, որ ոչ ոք ապագային չի կարող յազենալ աստուածային սիրոյ քաղցրութեամբ, ինչպէս որ ոչ ոք չի կարող նրանով ներկայիս լիանալ: Եւ այս անկարելիութեան վերաբերեալ մխիթարութիւնդ թող լինի ոչ մի մխիթարութիւն չունենալդ: Մաղթում եմ քեզ լինել համբերատար, թէեւ այս հարցում անհամբեր լինելն առաւել պատշաճ է¹²:

¹¹ Առաջին պատմուճանը հոգիների հանգիստն ու երանութիւնն է, երկրորդը՝ մարմինների յարութիւնը, անմահութիւնն ու փառքը: Սբ. Բեռնարդոս, *In festo sanctorum domnium sermo III*, 1; PL 183, 469B.

¹² Սբ. Օգոստինոս, *Epistola XXVII*, 1.

Գ. Ահրը տեսնում է Սիրեցեալին առանց երբեւէ յագնալու

17. Ինչ եղանակով էլ, ուրեմն, քննարկուեցին այս նիւթերը, գրիչը թող յառաջ ընթանայ քննելու մնացածները, մինչեւ որ Աստուած, ըստ Իր քաղցրութեան, կը հաճի աղքատի առաջ բացել դէպի այդքա՛ն մեծասքանչ իրողութիւններն ուղղուած ճամփան: Սովորաբար, սակայն, այս նիւթերի վերաբերեալ աւելի դիւրին է ցոյց տալ մոտաքը նրան՝ ով բախում է բարեպաշտութեամբ, քան նրան՝ ով մանրակրկիտ քննում է մինչեւ խորքերը: Բախում է նա՝ ով կամենում է ստանալ եւ ով աղօթում է. եւ «ով բախում է, նրա առաջ կը բացուի» (Մտթ 8, 8; Ղկա 9, 10): Իրօք, չպէտք է կասկածել՝ թէ բախողի առաջ սիրով կը բացի Նա՝ ով բոլոր նրանց՝ ովքեր տակաւին չեն բախել, յորդորում է բախել:

18. Այսպիսով, գորովագութն Աստուած կամենում է, որ Իրենից խնդրենք նաեւ այն՝ ինչ Ինքը խոստանում է, եւ այս իսկ պատճառով խոստանում է այն՝ ինչ նախապէս որոշում է տալ, խնդրելու համարձակութիւն ներշնչելու համար եւ որպէսզի աստուածասէր աղօթքը արժանանայ նրան՝ ինչը Նա կամենում էր ձրիաբար պարգեւել: Այսպիսով, մեզնից եւ մեզ ի նպաստ խլելով արժանիքները, մինչ մեզ կանխում է պարգեւելով այն՝ ինչով մեզ հատուցում է. գործում է ձրիօրէն՝ ձրիօրէն չհատուցելու համար: Իսկապէս արժանի է փոխադարձաբար սիրուելու Նա՝ ով այսպէս կանխում է մեզ Իր սիրով: «Սրանում է կայանում սէրը, – ասում է Յովհաննէսը, – ո՛չ թէ որ մենք սիրեցինք Աստծուն, այլ Նա առաջինը սիրեց մեզ» (1Յվհ 4, 10): Իր սէրն, ուրեմն, կանխում է մեզ. Իր սէրն անկասկած աւելի բարեսիրտ է մերինից, բայց մերն աւելի արդար է: Նա, յիրաւի, ձրիօրէն սիրում է նոյնիսկ ապերախտներին, մինչ շատ յստակ է՝ որ մենք սիրում ենք Իր շնորհով եւ որովհետեւ Իր հանդէպ պարտական ենք: Նա տալիս է մեզ աղբիւրը եւ պատճառը, որի համար սիրուած է, որպէսզի հաւասարապէս սիրուի Իր սիրով եւ Իր սիրոյ համար: Եւ, իրօք, շտապեմ մի կողմ թողնել այս պարգեւի մասին խօսելը, որովհետեւ անճառելի է: Թէեւ հնարաւոր է նրա ընկալումը մարդկային սակաւաթիւ հոգիների մէջ, այնուամենայնիւ՝ չի կարող արտայայտուել ոչ ոքի կողմից: Այս պարգեւը ճանաչում են միայն Նա՝ ով տալիս է եւ նա՝ ով ընդունում է, բացառելով միւս բոլորին: Նաեւ նրանց համար, ովքեր ստանում են եւ ունեն, ստացած լինելու այսքա՛ն խորհրդաւոր փաստն անգամ մնում է կասկածելի ու անորոշ: Ինչը որ փրկարար է իրենց համար, որպէսզի հպարտութեան մէջ չընկնեն:

19. Արդ աղաչում եմ քեզ, սիրելիդ իմ Սէվէրինոս, հայեացքդ ուղղիր այս ստորին իրականութիւններին, որոնք տեսնողների մեծամասնութիւնը իրականում չի տեսնում, եւ ուշադրութիւն դարձրու այն բոլոր իրողութիւններին, որոնք օգնում են մեզ նպաստաւոր իրավիճակներում կամ ընդհակառակն՝ մեր վրայ յարձակում են նեղութիւններում. արդեօք բոլորն էլ դէպի սէրը մղող ազդակներ չե՞ն, որոնք այս կամ այն կերպ խթանում են դէպի սիրոյ ընթացքը: Ամբողջ տիեզերքը, յիրաւի, իր ընթացքի նպատակակէտը կողմնորոշում է դէպի սա. գոհացում տալ մարդկային պահանջներին ու հաճոյքներին, կամ էլ՝ լրացնել պակասութիւնները: Սրա համար գոյութիւն ունեն երկինքն ու երկիրը, ծովն ու օդը, ժամանակների այս հոսքը, որ հնութիւնները միշտ վերականգնում է նոր մասերով, վերահաստատում է ոչնչացածները, նորոգում է մաշուածները, անդադար առաջնորդում է դէպի իրենց նպատակակէտը, որովհետեւ ինչպէս ոչ ոք չի կարող մերժել համընդհանուր շարունակական բարեգործութիւնները, այնպէս էլ ոչ ոք չի կարող չսիրել բարեգործին:

20. Թերեւս համաձայն ես ամէնին, որ վերաբերում է նպաստաւոր իրավիճակներին, բայց կը փափաքէիր յստակել՝ թէ ինչպէս են նեղութիւնները նոյնպէս սովորեցնում սիրել, կամ ուղղակի՝ պահանջում են սէր: Քանի որ մարդկային ապերախտութիւնը յաճախ է հպարտութեամբ իրենը նկատում Արարչի պարգեւները, մարդու միեւնոյն Արարիչը կամենում է, ըստ Իր խորհրդաւոր ու փրկարար ծրագրերի, որ մարդը նեղութիւնների ենթարկուի, որպէսզի երբ մարդը նուազի եւ Աստուած օգնութեան հասնի, Աստուած Ինքը, ինչպէս որ արժանի է, սիրուի մարդու կողմից: Սա է, յիրաւի, այն՝ ինչ ասում է սաղմոսը. «Նեղութեանդ օրը կանչիր ինձ. կը փրկեմ քեզ եւ դու կը փառաւորես ինձ»

(Մզմ 50, 15): Այս յաճախակի նեղութիւնների պատճառով անխուսափելի է, որ Աստուած յաճախակի այցելութիւններ չստանայ մարդու կողմից, այցելութիւններ ստանալով՝ չճաշակուելի, իսկ ճաշակուելով չզգացուի՝ թէ «քանիցս քաղցր է Աստուած» (Մզմ 33, 9): Եւ այսպիսով ստացուում է, որ երկաթէ մի սիրտ, որը բարեյաջող օրերով լի կեանքում չէր կարողանում փափկել, նեղութիւններով դաստիարակուելով՝ թուլանում է եւ իր ազատարարի շնորհի առջեւ դառնում է դերբաւ կաղապարելի, եւ սովորում է սիրել Աստծուն, եթէ ոչ Նրա բարութեան, գէթ իր իսկ անձի օգուտի համար: Սա սիրոյ առաջին աստիճանն է նրա համար՝ ով սկսում է սիրել, ամենացածր աստիճանը նրա համար՝ ով արդէն իսկապէս սիրում է, քանի որ այս աստիճանի վրայ սիրում ենք Աստծուն ոչ թէ իր, այլ մեր համար: Ակնյայտ է, հետեւաբար, թէ ինչպէս են նեղութիւնները նախապատրաստում եւ որոշ կերպով ստիպում սիրել Աստծուն, նրան՝ ով սիրում է միայն մարմնի համաձայն եւ միայն մարմնական իրողութիւնները:

21. Բայց նաեւ նրանց համար՝ ովքեր բոցավառուել են սիրով, նպաստաւոր իրավիճակները երբեմն դադարում են, վերին ծրագրերի համաձայն, եւ միջամտում են նեղութիւնները, ինչպէս երբ – եւ դժուար է սրանից խուսափել – հրապուրիչ յաջողութիւնները իրենց կողմն են քաշում սիրոյ մի մասը, որը ետ է վերցնում յաջորդ նեղութիւնը, որն է միայն սովորեցնում, ինչպէս ուսուցանում է երանելի Յովհաննէսը, իսկապէս «չսիրել աշխարհը, ո՛չ էլ աշխարհի իրողութիւնները» (1Յվհ 2, 15): Ժիշտ այսպէս իսրայէլացիները եգիպտացիների կողմից հարկադրուեցին մեկնել Եգիպտոսից, քանի որ, ինչպէս վկայում է երանելի Գրիգորը, աշխարհը հոգին նեղութիւններով չարչարելով՝ բարձրաձայն մի բան է միայն հուշակում. որ արժանի չէ սիրուելու¹³: Միմիայն սէրն է, ուրեմն, որ Աստուած պահանջում է մեզնից, երբ լիացնում է մեզ իր բարերարութիւններով, նմանապէս՝ ինչպէս երբ ենթարկում է անյաջողութիւնների, կամ կրթում է խորհրդատուութեամբ, կամ պարտաւորեցնում է հրամաններով: «Սէրը օրէնքի լրումն է» (Հռմ 13, 10) եւ իր մէջ բովանդակում է «օրէնքն ու մարգարէները» (Մտթ 7, 12), քանի որ աստուածային օրէնքով պատուիրուած կամ արգելուած ամէն բան առաջնորդում է դէպի սէրը: Վճարիւր սիրոյ հարկը եւ կ'իմանաս, որ գոհացրել ես Տիրոջը:

22. Ուրեմն ինչի՞ է ծառայում, կը հարցնես, կենցաղում մեր այսչափ խստութիւնը, պարզութիւնը հագուստների մէջ, հսկումների ու կանոնների լուծի դառնութիւնը: Ընդունիր հետեւեալ համառօտ բացատրութիւնը: Վերոյիշեալ գործերից ոմանք սիրոյ ընծաներն են, որոնք Աստծուն հաճելի են եւ գոհացնում են Նրան, եթէ կատարում են սիրով: Բայց առանց սիրոյ, ոչնչի պէտք չեն: Սա է, յիրաւի, այն առաքիլութիւնը, որի ընկերակցութեամբ՝ ամենափոքրիկ գործն անգամ չի մերժուում, եւ առանց որի՝ ամենամեծն անգամ անընդունելի է: Ո՛չ քարոզչութիւնը, նոյնիսկ եթէ «հրեշտակների լեզուն խօսի». ո՛չ հաւատքը, նոյնիսկ եթէ «լեռներ փոխադրի». ո՛չ ողորմութիւնը, նոյնիսկ եթէ «իր բոլոր ունեցուածքները որպէս կերակուր աղքատներին բաժանի». ո՛չ մարմնական ապաշխարանքը, նոյնիսկ եթէ «մարմինը այրելու տայ» (1Կր 13, 1-3). ո՛չ Պատարագների հանդիսաւորութիւնը, որովհետեւ արգելուած է գոհ մատուցել եղբօր հետ հաշտուելուց առաջ (Մտթ 5, 24): Աստուած, մարդկանց սիրողը, իսկապէս Նա է՝ ում իւրաքանչիւր արարած իրաւացիօրէն խոստովանում է ու ասում. «Դու կարիքը չունես իմ ունեցուածքների» (Մզմ 16, 2): Այլ մարդուց պահանջուում է միայն այն՝ ինչը որ դժուարին չէ ոչ ոքի համար: «Յիրաւի, միմիայն սէրն է, – ինչպէս ասում է երանելի Օգոստինոսը, – որ անգիտանում է "դժուարութիւն" բառը. սէրը, երբ շատ ու շատ է բաշխում ընկերոջ համար, կարծում է՝ թէ քիչ կամ ոչինչ է ծախսել»: Ահա սա է պատճառը, որ այն բոլոր տարիները Յակոբին թուում էին «սակաւաթիւ օրեր, այնքան որ մեծ էր իր սէրը» (Ծնդ 29, 20): Սիրոյ պատճառով, իրօք, նա՝ ով իսկապէս սիրում է, դժուարութեամբ է ուշադրութիւն դարձնում ընկերոջ համար արածին, մինչ այնքան ուշադիր է սիրոյն, որ նրա համար

¹³ Մբ. Գրիգոր Մեծ, *Dialogorum liber III*, 38; PL 77, 317.

գրեթէ անթոյլատրելի է սիրեցեալից բացի ուրիշ որեւիցէ բանի մասին մտածելը, որովհետեւ «մի նշան է կրում իր սրտի ու ձեռքի վրայ» (Երգ 8, 6):

23. Այլեւս որտեղի՞ց կարող է ներս խցկուել մոռացութիւնը նրա՝ ով լոյսի անսահման ճառագայթներից, անապական քաղցրութեան վտակներից բացի, որոնցով անասելի եղանակով հեղեղում է հոգին, տեսանելի իրականութիւններում նոյնպէս չի դադարում սիրեցեալի առաջ ցուցադրել իրեն: Աստծուն իսկապէս սիրողը ուր էլ դարձնի հայեացքը, անկասկած կը գտնի սիրոյ ընտանի յիշատակը. այս իրականութիւնները նա գործածում է որպէս հայելի, եւ այն բոլոր պատկերներում, որ տեսնում է, ցոլանում է իր Սիրեցեալի յիշատակը: Քննում է գոյութիւն ունեցող ամէն բան, որոնք Աստուած հաստատել է. քննում է՝ թէ ինչ նպատակով են ստեղծուել այդ բոլոր գոյութիւնները, եւ այդ բոլորը նրա առաջ ներկայանում են ոչ այնքան հիանալի, որքան սիրելի. եւ սիրոյ գրաւականից, որն Աստուած ըստ իր իմաստութեան կանխաւ վճարել է, հասկանում է՝ թէ դեռեւս որքան սէր է վերապահուած իրեն որպէս ժառանգութիւն: Իսկապէս աղաւնու մաքրափայլ աչք է սէրը, որը մարդու գործածութեանը յանձնուած իրականութիւններում չի խոցում անկարգ կրքերից, այլ անցողիկ իրականութիւնների միջով հայտնում է յաւերժութեանը: Սա է այն աչքը, որ չի փակուում, երբ մարմնական կոպերը յոգնած թուլանում են. որ չի ցաւում, երբ ինչ որ մի բան է նետում վրան, որովհետեւ ոչինչ չի ընդունում դրսից. որ չի կուրանում ծխից, որովհետեւ «նրանում խաւար չկայ» (1Թվհ 1, 5). չի ծանրանում քնաբեր թմրութիւնից, նրա վկայութեան համաձայն՝ ով ասում է. «Ես ննջում եմ, բայց սիրտս հսկում է» (Երգ 5, 2): Ազնիւ ու նպաստաւոր աչք, որ այս ու այն կողմ չի ցրում չար մտածումներով եւ դէպի ստորին իրականութիւնները չի հակում երկրային կրքերով: Իսկապէս անկեղծ ու խոհեմ աչք, որ չի սասանում անհիմն կասկածներով, որ չի զբաղում հետաքրքրութիւնը զրգռող մտածումներով, աչք՝ որ իր ուշադրութիւնն անդադար ուղղում է դէպի Նա՝ ում «հրեշտակները փափաքում են տեսնել» (1Պտ 1, 12): «Սաստիկ սէրը, – ինչպէս ասում է երանելի Օգոստինոսը, – չի կարող չտեսնել սիրեցեալին, քանի որ սէրը աչք է, իսկ սիրելը՝ տեսնել»:

24. Այս աչքից իր խոցուած լինելն է խոստովանում նա՝ ով ասում է. «Խոցեցիր ինձ աչքերիցդ մէկում» (Երգ 4, 9): Իրօք, հոգին երկու աչք ունի. մէկը՝ որով ըմբռնում է, եւ միւսը՝ որով փնտռում է նրան՝ ով «հայտնում է մարդկանց որդիների վրայ, տեսնելու՝ թէ արդեօք կա՞յ մի իմաստուն, կամ մէկը՝ որ փնտռի Աստծուն» (Սղմ 14, 2; 53, 3): Այս երկու աչքերից աջը սէրն է, որը, փնտռելով, խոցում է: Ինչպէս նաեւ «ցատկում է լեռների վրայ ու հեծնում բլուրների վրայ» (Երգ 2, 8), այսինքն՝ ով գերազանցում է ամէն տեսակ իմացականութեան – մարդկայինին ու հրեշտակայինին – նրան անհնարին է ամբողջովին որսալ՝ առանց նախ սիրով խոցելու: Կամենո՞ւմ ես իմանալ, թէ ինչ է նշանակում՝ որ Աստուած խոցում է: Պատասխանում եմ քեզ, որ աստուածային ամենակարողութիւնը, մեր տկարութիւնից ազդուած, զթառատաբար իջնում եւ կարծես թէ վէրքի բացուածքի միջով ցոյց է տալիս ներքին քաղցրութեան գաղտնիքները: Այս իսկ պատճառով, կարող է խոցուել Նա՝ ով անչարչարելի լինելով հանդերձ, այնուամենայնիւ՝ մեր տառապանքի բաժնեկիցն է: Այս խոցը հասցւում է առանց զայրոյթի եւ զգացում է առանց ցաւի: Ամոնացիների թագաւորն իր չարամէտ դաշինքով պատրաստում էր խլել խոցող այս աչքը: Ասում էր. «Դաշինք կը կնքեմ ձեր հետ, եթէ հանեմ բոլորիդ աջ աչքը» (1Սմ 11, 2): Արդ, հեռացնելով սէրը, որ աջ աչքն է, մնում է միտքը, որն ասացինք՝ թէ ձախակողմեանն է. այսպիսի դէպքում հնարաւոր է դառնում միմիայն սխալը: Հասկանալ առանց սիրելու. անշուշտ այստեղից է բխում սխալը նրանց՝ ովքեր «Աստծուն ճանաչած լինելով հանդերձ, չփառաւորեցին նրան որպէս Աստուած, այլ ունայնութեամբ յագեցրին իրենց մտածումները» (Հոմ 1, 21): Քանի՜ քանիներ են նրանք, ովքեր թուում է՝ թէ պայքարում են սխալների դէմ, բայց կուրանում են ճիշտ այս սխալով, որից առաւել վատթար մէկը թերեւս անհնարին է գտնել:

25. Աստուած, հետեւաբար, տեսնում է նրանց կողմից՝ ովքեր իրեն սիրում են երկու աչքերով, բայց երկրորդից է միայն խոցում, քանի որ ուր միտքը խաւարում է, սէրը

ներթափանցում է, եւ ուր միտքը մերժում է, սէրն ընդունում է: Անշուշտ, մեզ թոյլատրուած է քննել մինչեւ խորքերը եւ իմանալ աւելի՝ քան որքան հարկաւոր է, բայց սիրել հրամայուած է մեզ նաեւ աւելի՝ քան որքան կարող ենք: Հնարաւոր է, ուրեմն, փակել սիրոյ աչքն այնպէս՝ որ չտեսնի Սիրեցեալին, թէեւ ո՛չ «այնպէս՝ ինչպէս որ է» (1Յվհ 3, 2), ըստ իր էութեան, մի բան՝ որն, ինչպէս վկայում է երանելի Յովհաննէսը, վերապահուած է որպէս ապագայ վարձատրութիւն, այլ այնպէս՝ ինչպէս նա ինքն է կամենում, ինչպէս բարեացակամօրէն պարգեւում է մեր մխիթարութեան համար¹⁴: Բայց տեսնում է իւրաքանչիւր սիրողի կողմից, քանի որ սիրում է. մէկին մի եղանակով, ուրիշին ուրիշ եղանակով, գորովի զգացումների համաձայն՝ որոնցով մղւում են դէպի ինքը: Ոմանք աւելի եռանդով տեսնում են աստուածութեան զաղտնիքներին, ուրիշներ՝ աւելի հանդարտութեամբ հիանում են մարդեղութեան խորհուրդներով. այս վերջինները հայում են մարդկութեան փրկութեան վերաբերեալ Աստուծոյ խորին ու խորհրդաւոր ծրագրերին: Յամենայն դէպս, վստահելի է այն ամէնը՝ ինչի վրայ սիրոյ աչքը հառում է իր հայեացքը, միայն թէ այժմ տեսնում է ըստ արժանիքի, իսկ մի օր տեսնելու է անթերի, երբ մի կողմ քաշուելով ապականութեան քողը, ուրախութեան մէջ տեսնելու է Աստուծոյ Դէմքը, ինչպէս գրուած է¹⁵: Այս խորհրդածութիւններին կարող էինք աւելացնել ուրիշ շատեր, նրանց համար՝ ովքեր քաղցած են, թէեւ որեւէ օգտակարութիւն չէին ունենայ նրանց համար՝ ովքեր արդէն կուշտ են: Բայց երկարաբան ճառախօսութեամբ քեզ չճանճրացնելու համար, ըզճացող գրիչս հրում եմ – խոստանում եմ – դէպի ուրիշ նիւթեր:

Գ. Սիրոյ անբաժանելիութիւնը

26. Իսկ այժմ թող ուշադրութեան կենտրոնում լինի հարցմանդ վերջին փոքրիկ բաժինը, որի վերաբերեալ անտեղիտալիօրէն պնդում ես, որ քննարկեմ յատուկ ուշադրութեամբ, ով բարեպաշտ իմ Սէվէրինոս: Պարտաւոր եմ, անշուշտ, լուսաբանել իմ խօսքերը, բայց ամէն ինչից աւելի՝ քո արժանիքները, որոնց վրայ եմ հիմնում վստահութիւնս, ո՛չ միայն ուսումնասիրութեան վերաբերեալ, այլ նաեւ բոլոր դժուարութիւններում: Բայց համառօտ ամփոփենք մինչ այժմ ասուածները, այնպէս՝ որ սրանց շնորհիւ խօսքը առաջնորդուի նախապէս որոշուած ուղղութեամբ: Արդէն ասուածներից գիտես, որ սէրը պայքարում է առանց երբեւէ պարտուելու, ճաշակում է առանց երբեւէ յագենալու, հայում է առանց երբեւէ ընդմիջելու: Այժմ մտադիր եմ արդէն ասուածներին աւելացնելու, որ սէրը նաեւ անբաժանելի է: Իսկապէս, այն աստիճան պինդ է սիրոյ գամը, որ նախընտրելի է ասել՝ թէ միացնում է, քան թէ՛ կցում: Մի խօսքով, մարգարէի համաձայն՝ կայ մի «լաւորակ գամ» (Ես 41, 7), որը միացնում է առաքինի մարդուն երեք եղանակով, այնպէս՝ որ վերամիաւորուի ու մէկ միութեան մէջ հաւաքուի ինքն իր, մերձաւորի եւ Աստուծոյ հետ:

27. Այո՛, փրոյ շնորհիւ մարդը միաւորւում է, երբ ինքն իր մէջ հաւաքուելով ու գորովի բոլոր զգացումները ետ կանչելով այն բոլոր վայրերից՝ ուր բանտարկուած էին, անփոփոխ կերպով սիրում է միայն մէկին եւ այլեւս չի շարժւում զանազան ուղղութիւններով: Իսկապէս, երբ սիրով բաժանում է եւ ուղղում դէպի մէկից աւելի իրականութիւններ, այլեւս երբեք չի գտնում իրեն որպէս մի եւ նոյնը, այլ միշտ՝ ինքն իրեն չնմանող, քանի որ հարկադրւում է ամէն անգամ փոխուել, երբ փոխում է իր

¹⁴ Աստուած, ըստ իր անտեսանելի բնութեան, բազում անգամներ յայտնուել է, ինչպէս վկայում են Հին Կտակարանի պատմութիւնները, մարդկային աչքին, ում կամեցել է եւ միշտ այն կերպարանքով՝ որ կամեցել է, բայց երբեք ըստ իր էութեան: Սբ. Օգոստինոսն ընդունում է, որ Աստուած ըստ իր էութեան յայտնուել է միայն Պօղոսին ու Մովսէսին:

¹⁵ Սբ. Օգոստինոսի մեկնաբանութեան համաձայն, Աստուծոյ Դէմքը տեսնելը նշանակում է տեսնել Աստուծուն ըստ իր էութեան, այնպէս՝ ինչպէս որ է, մինչ Աստուծոյ թիկունքը տեսնելը նշանակում է տեսնել Նրան միայն ընդմէջ Քրիստոսի մարդեղութեան:

սիրոյ առարկան: Ով, յիրաւի, վստահում է անցողիկ իրականութեան վրայ, չի կարող չանցնել անցողիկ իրականութեան հետ:

28. Մարդը, աստուածային սիրոյ շնորհիւ, միանում է մերձաւորին, երբ ո՛չ միայն յանձն է առնում նուիրուել որքան կարող է բոլորին, առանց դժգոհելու, այլ նաեւ՝ երբ նոյնանում է նրանց վիճակների հետ. «ուրախանալ ուրախացողների հետ ու լալ արտասուողների հետ» (Հում 12, 15), «տկար լինել տկարների հետ ու սրտով այրուել գայթակղուողների համար» (2Կր 11, 29), ինչպէս գրուած է. «Ընկերակիցս նեղութիւններում եւ արքայութեան մէջ» (Յյտ 1, 9): Այսպէս, «հաւատացեալների բազմութիւնը մի սիրտ ու մի հոգի էր» (Գործք 4, 32), երբ ո՛չ կամքի տարբերութիւնները, ո՛չ ունեցուածքների սեփականութիւնը չէր բաժանում հոգիները միմեանցից, այլ սէրը «հոգու միութեան եւ խաղաղութեան կապերի մէջ» (Եփս 4, 3) ամուր ու քաղցրօրէն միաւորում էր նրանց: Աւա՛ղ, մենք ընկել ենք մի ստորին աշխարհ. ինչպիսի՛ սահմանների, կամ աւելի ճիշտը՝ ժամանակների ինչպիսի կեղտոտ սահմանագրի են հասել մարդիկ, երբ, դեռ մի կողմ թողնելով աշխարհիկներին, որոնք յաւակնոտութեամբ կուրացել են, ընտրութեան ժողովուրդն ինքը մեր թշուառ ժամանակներում հերձուած է բազմաթիւ բաժանումներով, այն աստիճան՝ որ դժուարութեամբ կարելի է գտնել միասին համաձայնուող երկու անձ. մարդիկ միմեանց միջեւ համաձայնում են միմիայն «Տիրոջ դէմ ու Նրա կողմից առաքուած Մեսիայի դէմ» (Սղմ 2, 2) ընթանալու համար¹⁶: Ամէն կողմ փլուզումներ ենք տեսնում Դաւթի քաղաքում, եւ այնքան շատ են՝ որ մօտակայ ամբողջական կործանման վտանգն են ստեղծում: Միաձեւ կապայի ու նմանատիպ հագուստների տակ պահուած են տարբեր ու ամբողջովին տարանման սրտեր, այն աստիճան՝ որ դժուարութեամբ կարելի է գտնել նախնական կրօնի նշանները, եւ նրանցից՝ ովքեր հասնում են Տիրոջ գերեզմանին, որ վանքն է, եւ փնտռում են Քրիստոսին, տեսանելի է միայն «կտաւէ վարչամակը», այսինքն՝ հագուստի արտաքին երեւոյթը¹⁷: Խոստովանում եմ. բաւական տհաճ է այս կացութիւնը: Բայց դուրս գանք այս նիւթից, որովհետեւ նպատակս այստեղ մոլութիւնների մասին խօսելը չէ:

29. Սէրը նաեւ միացնում է Աստծուն մարդուն եւ մարդուն Աստծուն, ո՛չ միայն այն անձառելի միութեամբ՝ որով մեր բնութիւնը միացած է յաւիտենական Խօսքին, Անձի միութեան մէջ, որն իրագործեց ճիշտ այն սէրը՝ որով սիրեց մեզ «աշխարհի հիմնարկումից առաջ» (Յվհ 17, 24; Եփս 1, 4), այլ նաեւ այն միութեամբ՝ որի մասին Առաքեալն ասում է. «Ով միանում է Աստծուն, դառնում է Նրա հետ մի հոգի» (1Կր 6, 17): Սա անշուշտ սիրոյ միութիւնն է, որով մարդը, Աստծոյ սրտի համաձայն, բարձրեալ ու յաւիտենական կամքի բոլոր փափաքներին կերպարանակից, միանում է Աստծուն, անփշրելի գամով ու անկործանելի կապով: «Սէրը կատարելութեան զօրն է» (Կող 3, 14), որի միջոցով՝ անդամները, որ հաւատացեալներն են, փոխադարձաբար միմեանց միջեւ եւ իրենց Գլխի հետ միացած են մնում մտերմագոյն զրկախառնման մէջ եւ միմեանց պատուաստում են իբրեւ «մի մարմին» (Հում 12, 5; 2Կր 12, 12.20), ընդմէջ ամէն տեսակ յօդաւորումների, բոլորի բարիքների փոխադարձ համամասնակցութեամբ, այնպէս՝ որ իւրաքանչիւր ոք կարող է ամենայն վստահութեամբ ասել. «Ես մի մասնիկն եմ բոլոր նրանց՝ ովքեր ունեն Քո երկիւղը եւ պահում են Քո պատուիրանները» (Սղմ 119, 63): Այս իրականութեան վերաբերեալ է ասուած, կարծում եմ, հետեւեալ խօսքը. «Եռակի պարանը դժուար է կտրել»

¹⁶ Խօսքը վերաբերում է Եկեղեցուն («ընտրութեան ժողովուրդը»): Հեղինակը դժգոհում է, որ ո՛չ միայն աշխարհը, այլ Եկեղեցին նոյնպէս չի ապրում սէրը որպէս եղբայրական միութիւն: Բողոքները չեն խնայում եւ ոչ իսկ վանականներին:

¹⁷ Համեմատութիւնն այնքան էլ ակնյայտ չէ. ով այցելում է վանքերից որեւէ մէկը, տեսնում է հագուստի միայն արտաքին երեւոյթը, ինչպէս երբ Պետրոսն ու Յովհաննէսը գնացին Քրիստոսին գերեզմանում փնտռելու, գտան միայն կտաւէ վարչամակը, որի մէջ փաթաթուած էր: Միայն Մարիամ Մագդաղենացու հոգեւոր գիրքորոշումները ընդունակ եղան յարուցեալ Տիրոջը տեսնելու (Յվհ 20, 5-7):

(Ժող 4, 12): Ասուում է եռակի, որովհետեւ ինչպէս արդէն ակնարկեցի՝ կապում է երեք եղանակով:

30. Ուզո՞ւմ ես, որ Առաքեալն ինքը նկարագրի այս եռակի պարանը: «Այս պատուիրանի նպատակը», ասում է, «սէրն է, որ բխում է մաքուր սրտից, բարի խղճից ու անկեղծ հաւատքից» (1Տմ 1, 5): Միմիայն մաքուր սիրտն է ընդունակ այս ու այն կողմ չցրուելու: Դիւրամատչելի սրտից աւելի հեշտօրէն կեղտոտուող ոչինչ չկայ, որին միայն սէրն է այնպէս պահում, որ ապարդիւն չբացուի ամէնքի առաջ: Բացի սա, Առաքեալի համաձայն, բոլորի հանդէպ բարի խղճմտանք ունի նա՝ ով մերձաւորի բարիքը սիրում է ինչպէս իրենը, եթէ համոզուած է՝ թէ չունի այն առաքինութիւնը՝ որը «չի փնտռում սեփական շահը» (1Կր 13, 5): Անկեղծ հաւատքն այն է, որ «գործում է սիրոյ միջոցով» (Գղտ 5, 6): Այլապէս, Յակոբոս Առաքեալը չի խուսափում կոչելուց այն ո՛չ միայն կեղծաւոր, այլ ուղղակի «մեռած» (Յկբ 2, 26): Իսկապէս դժուար է կտրել այս եռակի պարանը, որով կապուած Պօղոսը համարձակուում է ասել. «Ո՞վ կարող է բաժանել մեզ Քրիստոսի սիրուց. լինեն դրանք նեղութիւններ, վիշտ, քաղց կամ մերկութիւն» (Հռմ 8, 35): Իսկապէս հզօր կապ է, որի դէմ ոչ մի բռնութիւն չի կարող գերակշռել եւ որը անբաժանելիօրէն միացած է պահում սիրողը սիրեցեալի հետ:

31. Ոչ ոք, սակայն, թող չկարծի՝ թէ այնքան անմիտ եմ, որ մտածեմ ինչպէս նրանք՝ ովքեր հաստատում են՝ թէ սէրը ստանալուց յետոյ այլեւս անհնարին է կորցնել, որովհետեւ եթէ սէրն ունեցող իւրաքանչիւր անձ ունենար նաեւ յարատեւութիւնը, Տէրն ապարդիւն կերպով զգուշացրած կը լինէր իր աշակերտներին, ասելով. «Սիրոյս մէջ մնացէք» (Յվհ 15, 9): Բայց այս հարցի վերաբերեալ անշուշտ կը մտածէի, որ սէրը կարող է կամովին լքուել, եւ ո՛չ թէ բռնութեամբ ետ վերցուել: Բոլորին պարզեւուած է, ոչ ոքից վերցուած չէ, որպէսզի ոչ ոք նրանից զրկուած չլինի, եթէ ոչ միայն՝ սեփական կամքով:

32. Բայց որպէսզի միմեանց սիրողների գորովալի զգացումները կարողանան միանալ այս միաւորիչ առաքինութեան շնորհիւ, հարկաւոր է՝ որ սիրողի սիրտը հալուի ու հեղուկ դառնայ, այնպէս՝ որ կարողանայ լցուել ու կաղապարուել նրա մէջ՝ ում սիրում է, եւ վերածուել մի ուրիշ մարդու, ինչպէս գինու մէջ նետուած ջրի կաթիլը անհետանում է, ստանալով ա՛յլ համ եւ գոյն: Ահա սա է պատճառը այն յաճախակի նուազումների – աւելի ճիշտը՝ առաջադիմութիւնների – որ պատահում են եռանդագին սիրողներին, մինչ իրենց անձի վերաբերեալ եւ իրենց անձի ներսում չեն տեսնում ուրիշ ոչինչ, եթէ ոչ միայն այն՝ «որ է նաեւ ի Քրիստոս Յիսուս»: Գիտես՝ թէ ինչ եմ ուզում ասել, եւ ոչ ոք քեզնից աւելի լաւ չգիտէ:

33. Միմիայն հեղուկներն են յարմարուում կապաղարներին. որեւէ պատկերից աւելի՝ սա է վայելում սիրող սրտին: «Սիրտս», ասում է սաղմոսերգուն, «դարձել է հալուող մոմի նման» (Սղմ 22, 15): Երբ հալուում է, տուեալ նիւթը փափկում է, ընդարձակում, մաքրում: Եւ արդ, ուշադիր քննիր՝ թէ ինչպէս է այս եռակի արդիւնքը կատարուում նաեւ սիրոյ պարագային, որն իրօք աստուածային կրակն է. սրտերն ազատագրում են, մաքրում եւ շաղուում միութեան զանգուածի մէջ, ինչպէս կրակով հալուած զանազան մետաղներն են միմեանց միանում: Փափկում է, դառնում հպուելի, կորցնում է այն ատելի կարծրութիւնը, որ կայանում է սրտի անզգայութեան մէջ, որով նախապէս չէր զգում ո՛չ իրեն, ո՛չ էլ ուրիշին, չէր կքում աստուածսիրութեամբ, չէր յուզում աղօթքից, չէր ընդունում օրինակելի առաջնորդների խորհուրդները, չէր սարսափում սպառնալիքներից, կարծրանում էր բարօրութեան մէջ, դաս չէր առնում նեղութիւններից: Աներես՝ անարգ գործերում, միշտ պատրաստ՝ օրէնքի դէմ գործուող յանցանքներում, ենթարկուելու անընդունակ, եթէ ոչ միայն՝ երբ չի կարող դիմադրել: Այս բոլորի համար քեզ թող օրինակ լինի կարծրասիրտ Փարաւոնը (Ել 7, 13-14; 8, 19.32):

34. Արդ, փափկացած սիրտը, երանելի Պօղոսի ուսուցման համաձայն, «ընդարձակուում է» (ԶԿր 6, 13) սիրոյ մէջ եւ տարածում է ամէնուր, «դէպի աջ ու դէպի ձախ» (ԶԿր 6, 7), օգնութեան հասնելով թշնամիներին ու բարեկամներին, սրտաբուխ ու

ազատակամ վազքով ընդառաջ ելնելով բոլորին, ուրախանալով մերձաւորի առաջադիմութիւններէ եւ վշտանալով նրա թերութիւններէ համար: Հոսում է, ուրեմն, բայց առանց ցրուելու ու անհետանալու, որովհետեւ ուղղում է իրեն դէպի ուրիշներն այնպէս՝ որ ինքն իրենից չի հեռանում այդքանից աւելի: Եւ տես՝ թէ մարգարէն ինչպէս է զգացել սա. երբ իր սիրտը համեմատում է հալուած մոմին, իսկոյն աւելացնում է. «Իմ որովայնում» (Սղմ 22, 15): Հետեւաբար, իսկապէս հալուել էր, բայց ինքն իրենից դուրս չէր թափուել: Թափուում ու կորչում է միայն նա՝ ով հալուելիս այնքան է հակուում դէպի ուրիշները, որ այլեւս ուշադրութիւն չի դարձնում ինքն իրեն: Ուշադիր եղէք, ասում է Առաքեալը, անհոգ չլինէք:

35. Եւ ոչ իսկ անհրաժեշտ է, որ այս ինքն իրենից յափշտակուելու ժամանակ – որի ընթացքում մարդկային հոգին աստուածային պարզեւով անջատուում է ցեխոտ զգայարաններից – ասենք՝ թէ դուրս են գալիս իրենք իրենցից, որովհետեւ Պօղոս Առաքեալը նոյնպէս իր յափշտակութեան մասին ասում է, որ ամբողջովին անգիտանում է՝ թէ «մարմնում էր կամ մարմնից դուրս» (ՉԿր 12, 2): Որտե՞ղ են, ուրեմն, այդ հոգիները, հարցնում ես ինձ: Իրենց ամենախոր ներաշխարհում: Խորն է մարդու սիրտն ու անգննելի, եւ հագուադէպ է պատահում՝ որ ինքն իր մէջ պատշաճ կերպով ամփոփուած մէկն անգամ կարողանայ ճանաչել իր ներաշխարհի ամենախոր ծալքերը: Հետեւաբար, հոգիները չեն տարուում դուրս, այլ ներս, դէպի այն իրօք մտերիմ վերնատունը, ինչպիսին էլ որ այն լինի, այնպէս՝ որ զգայարանների դռները փակելով, առաւել խաղաղութեամբ ու միայնութեամբ հասնեն Սիրեցեալի հետ սրբազան գրկախառնմանը: Եւ այստեղ, իրենց աւելի լաւ են զգում Սիրեցեալի հետ ճիշտ երբ անգիտանում են՝ թէ ուր են գտնուում: Առաւել մեծ վստահութեամբ են տիրանում, երբ ահա այսպէս կորում են:

36. Ինչպէս նաեւ հարկաւոր է, որ հալուած սիրտը մաքրուի, եւ եթէ ինչ որ քանակի ժանգ է պարունակում, դուրս թափի մինչ հալուում է, մինչեւ որ անարատ դառնայ շնորհիւ սիրոյ, որը «սպառող կրակ է» (ՉՕր 4, 24; Եբր 12, 29), որ ազատում է «տհասութեան ու պատանեկութեան մեղքերից» (Սղմ 25, 7) եւ հոգին դարձնում է իսկապէս մաքուր եւ արժանի «ամբիժ ու անթերի» աստուածային Փեսային (Եփս 5, 27): Ահա, լսիր սպառող բոցը. «Նրան ներուեցին իր անթիւ մեղքերը, որովհետեւ շատ սիրեց» (Ղկս 7, 47): Հետեւաբար, «ամէն բան նպաստում է Աստծուն սիրողների բարիքին» (Հռմ 8, 28), իսկ մահուանը ոչինչ չի վերագրում: Այն ամէնը՝ որ Նա ինքը չի վերագրում, այնպէս է՝ որ կարծես գոյութիւն չունի: «Երանի այն մարդուն, ում Տէրը յանցանք չի վերագրում» (Հռմ 4, 8): Չկայ մի մարդ, որ յանցանք չունենայ, այլ միայն նա՝ ով «ազատ է ննջեցեալների շարքում» (Սղմ 88, 6): Այսպէս ջերմանալով ու հալուելով, սիրտը դիւրաւ խայթուում է սիրեցեալի խօսքերից իւրաքանչիւրով եւ եռման աստիճանի հասնելով՝ փորձառութիւնն է ունենում այն բանի, որի մասին երգւում է Երգ Երգոցում. «Հոգիս հալումաչ եղաւ, երբ սիրեցեալս խօսեց» (Երգ 5, 6), եւ այն բանի՝ որի մասին կարդում ենք Աւետարանում. «Մի՞թէ մեր սիրտը չէր այրւում մեզնում, մինչ մեր հետ խօսում էր ճանապարհին քայլելիս» (Ղկս 24, 32):

37. Ո՛վ Աստծոյ քաղցր խօսակցութիւն հոգու մէջ եւ հոգու հետ, որ ծնւում է առանց լեզուի եւ առանց շուրթերի հնչման, եւ որ առանց ականջների՝ լսում է լռութեան մէջ: Այն լսում է միայն նա՝ ով խօսում է, եւ նա՝ ում խօսում է: Օտար ամէն ոք բացառուած է այս խօսակցութիւնից: Արդ, այդ խօսքերը երկնային ակունքի վտակներ են, որ սիրոյ փափաքով ոռոգում են ցամաքած ու մտամոլոր սրտերը: Այդ խօսքերի քաղցրիկ պատմութիւնը Աստծոյ քաղաքի մասին է, այդ քաղաքի խաղաղութեան ու առատութեան մասին, քաղաքացիների փառքի ու այդ լուսեղէն բնակավայրի գեղեցկութեան մասին, որով սրտից վտարուում է մեկամաղձոտութիւնը, իսկ մարմնից՝ յոգնութիւնը. բարեկամին աւետում է՝ թէ ինչպիսին է իր տիրոյթը, եւ որ կարող է բարձրանալ նրան հասնելու: Ուրիշ բան չէր փնտռում եւ չէր փաստում նա՝ ով ասում էր. «Հոգիս մեկամաղձոտութեամբ ծանրացել է. հաստատիր ինձ քո խօսքերով» (Սղմ 119, 28): Բայց ճշմարտութեան խօսքերը նման են մեր մտածումներին, եւ ոչ ոք հոգու ազդակների

այնքան արթուն քննիչ չէ, որ կարողանայ հեշտօրէն զանազանել սրտից բխածը ունկնդրածից. սա կարող է անել միայն նա՝ ով ուշադիր է Տիրոջը, որ ասում է. «Ինչո՞ւ էք չար բաներ խորհում ձեր սրտում» (Մտթ 9, 4), եւ միւս հատուածը. «Սրտից են ելնում չար մտածումները» (Մտթ 15, 19), եւ կրկին. «Ով ստում է, խօսում է իրենից» (Յվհ 8, 44): Ինչպէս նաեւ Առաքեալի խօսքերը. «Մենք անձամբ մեզնից որեւէ բան խորհելու կարող չենք» (2Կր 3, 5): Հետեւաբար, չարութիւնները յղանում ենք մեր սրտում, հետեւեալ խօսքի համաձայն. «Ասաց անմիտն իր սրտում. Աստուած չկայ» (Սղմ 14, 1; 53, 1): Բայց ուշադրութիւն դարձնենք բարի խորհուրդներին: Այստեղից. «Պիտի լսեմ՝ թէ ինչ է ասում Տէր Աստուած ինձնում» (Սղմ 85, 9), ինչպէս նաեւ. «Այդ խօսքերը լսելիս, նրան կը տրուեն ուրախութիւն եւ երջանկութիւն» (Սղմ 51, 10): Խօսքը ետ չի վերադառնայ առանց արդիւնքի, այլ «կը կատարի այն՝ ինչի համար առաքուել է» (Ես 55, 10), ուղղելով ու բեղմնաւորելով սրտերի խորքերը:

38. Այս խօսքերից օգուտ քաղողները նրանք են՝ ովքեր «տրամադիր են Աստուծոյ կողմից կրթուելու» (Յվհ 6, 45; Ես 54, 13) եւ որոնց «դպրոցը օծումն է» (1Յվհ 2, 27), որն է ամենայն ճշմարտութեան միակ ուսուցիչը, արագ ու անոյշ ուսուցմամբ: Սրանք խօսում են Աստուծոյ խորին խորհուրդների շուրջ, որոնց մասին «մարդկանց թոյլատրուած չէ խօսել» (Քր 12, 4), թէեւ թոյլատրուած է լսել. խօսքեր՝ որ անհնարին է լսել աշխարհի գիտուններից: Այս խօսքերն այնքան արդիւնաւէտ են, որ լսելիս՝ սրտերը հալւում են, հալուելիս՝ նուաղում, նուաղելիս՝ կատարելագործում, մինչ միասին ընթանում են դէպի այն միութիւնը, որն Աւետարանում փափաքում եւ խնդրում է Փրկիչը Իրենների համար. «Թող մէկ լինեն, ինչպէս եւ մենք մէկ ենք» (Յվհ 17, 22): Սա է յիշում երանելի Յովհաննէսը, երբ իր նամակում ասում է. «Ինչպէս Ինքն է, այնպէս էլ մենք ենք աշխարհում» (1Յվհ 4, 17), այսինքն. ինչպէս աստուածային Անձերի երանելի ու երանացուցիչ Երրորդութիւնն է անխառն ու անբաժանելի կերպով բովանդակուած յաւիտենական սիրոյ մէջ – այնպէս՝ որ ո՛չ Անձերի թիւն է աղաւաղում միութիւնը, որովհետեւ չի բազմապատկում էութիւնը, ո՛չ էլ միութիւնն է սեղմում Երրորդութիւնը միայն մէկ Անձի մէջ – այնպէս են նաեւ նրանք՝ ովքեր միացած ու կարգաւորուած են սիրոյ մէջ, ո՛չ թէ համեմատութեամբ, այլ որոշակի նմանութեամբ: Եւ թող անտրամաբանելի չհամարուի քիչ առաջ ասածս՝ թէ Աստուած բովանդակուած է սիրոյ մէջ, որովհետեւ ասածս ուրիշ բան չէ՝ եթէ ոչ միայն՝ որ Նա բովանդակուած է Ինքն իր մէջ: Իրօք, եթէ որեւիցէ մի միութիւն, եթէ այս միութեանը նմանուի, որոշակի առումով միութիւն կը լինի, եթէ միմեանց համեմատես՝ այդպիսին չի լինի ոչ մի առումով:

39. Ահա, թանկագինդ իմ, ընդունիր այս սակաւաթիւ խօսքերը: Երբ ամբողջութեամբ կը կարդաս սրանք, չթոյլատրես՝ որ որեւիցէ մէկը ընդօրինակի, այլ միայն նրանց՝ որոնց վերաբերեալ համոզուած կը լինես՝ թէ այս մտածումները օգտակար կը լինեն նրանց հոգիների սնուցման համար: Գիտես, յիրաւի, թէ ոմանք քանիցս պատրաստ են թուքով ծածկելու պարզ խօսքերը, որովհետեւ հետեւում են միայն եզրաբանական վէճեր ծնող ճառերին, որոնք ամբողջովին աննպատակ են եւ որոնց պտուղը աղքատ է, եթէ ոչ՝ ոչինչ:

